№ 156 ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 22

1906

ՇԱԲԱԹ ՅՈՒԼԻՍԻ 22 № 156

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները ԱՄԷՆ ՏԵՂ 5 ԿՈՊԷԿՈՎ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ». կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տէլէֆօն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—3 ժամ (բացի կիրակի և տօն օր՚երից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տէլէֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Դաւիթ, Յովհաննէս, Նազարէթ և Յակոբ Բասենցեանները խորին վշտով յայտնում են ազգականներին և ծանօթներին իրանց սիրելի և անմոռանալի եղբօր-դստեր՝ 2-րդ գիմնազիայի 5-րդ դասատան աշակերտուհի՝

ԱՆԱՀԻՏԻ

վաղաժամ մահը, որը տեղի ունեցաւ հինգշաբթի, յուլիսի 20-ին։ Հոգեհանգիստը այսօր, յուլիսի 22-ին, երեկոյեան ժամը 7-ին։ Յուղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 23-ին, առաւօտեան 10 ժամին իր բնակարանից (Գիօրգիեվսկի հրապարակ № 4.) դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—2

Վշտահար Խաչատուր և Շուշանիկ Բասենցեանները խորին վշտով յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին, իրանց սիրելի դստեր՝ 3-րդ իգական գիմնազիայի 5-րդ դասարանի աշակերտուհի՝

ԱՆԱՀԻՏԻ

վաղաժամ մահը, որը տեղի ունեցաւ հինգշաբթի, յուլիսի 20-ին։ Հոգեհանգիստը այսօր, յուլիսի 22-ին, երեկոյեան ժամը 7-ին, իր բնակարանում (Գիօրգիեվսկի հրապարակ № 4)։ Յուղարկաւորութիւնը կիրակի, յուլիսի 23-ին, առաւօտեան ժամը 10-ին դէպի Մէյդանի ս. Գէորգ եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։ 1—2

(շ. կ.)

Թիֆլիսի Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրանոցի Հոգաբարձութիւնը

սրանով յայտնում է, որ դպրոցում ուսուցչական պաշտօնների համար ընդունվում են խնդիրներ։

Ցանկացողները կարող են խնդիր ներկայացնել Հոգաբարձութեան մինչև օգոստոսի 15-ը։

(յուլ. 22, 28, օգոս. 2, 10) առ 1—4

Թիֆլիսի Ներսիսեան Հայոց Հոգեւոր Դպրանոցի Հոգաբարձութիւնը

սրանով յայտնում է, որ դպրոցի համար հարկաւոր է տնտեսական կառավարիչ։

Ցանկացողները կարող են խնդիր ներկայացնել մինչև օգոստոսի 5-ը։

(յուլ. 22, 26, օգոս. 2) առ 1—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՎՈՒՄ Է
Գ. ՉԱԼԽՈՒՇԵԱՆԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ
Հայերէն լեզուով
Թարգմ. Ս. Նազարեանի, հրատարակութիւն Բ. Ա. Մարտիրոսեանցի
ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

(Օգտից մի մասը յատկացնվում է վերջին դէպքերից վնասվածներին)

Գումարով գնողներին ռուբլուն 20% զեղջ ճանապարհածախսով։

Դիմել Թիֆլիսի գրավաճառներին կամ հրատարակչին Թիֆլիս՝ Головинскій проспектъ, табачній магазинъ կամ Բաթում Набережная ул. Բ. Ա. Մարտիրոսեանցին։ առ 1—2

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է
«ԽԱԹԱԲԱԼԱ»
Երգիծական-սատիրական շաբաթաթերթի բաժանորդագրութիւնը

Տարեկան գինն է Թիֆլիսում 4 ր., դուրսը՝ 5 ր., ½ տարվայ գինն է Թիֆլիսում 2 ր., դուրսը՝ 2 ր. 50 կ., երեք ամսվանը 1 ր., դուրսը՝ 1 ր. 25 կ.։

Ծ ան.—Սկզբում, մտադրվելով «Խաթաբալան» երկու շաբաթը մի անգամ լոյս ընծայել, տարեկան գինը որոշել էինք 2 ր. և 2 ր. 50 կ.։ Բայց այժմ, քանի որ այն շաբաթաթերթ դարձրինք, այդ պատճառով էլ գինը կրկնապատկում ենք։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, редакція «Хатабала».

Շաբաթ, յուլիսի 22-ին, լոյս կը տեսնի № 7.

Խմբագիր-հրատարակող՝ Աստ. Երիցեան

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Ներսիսեան Հայոց Ազգային Հոգևոր Դպրոցի Հոգաբարձութիւնը հրաւիրում է նոյն դպրոցի համար տեսուչ հետեւեալ պայմաններով։ Տեսուչը ստանալու է տեսչական ռոճիկ տարեկան 2400 ռուբլի, շաբաթական 6 դասով՝ դասագինը 70-ական ռուբլի։ Տեսուչն ունենալու է և օգնական։ Ցանկացողները պէտք է դիմեն հոգաբարձութեան մինչև այս տարվայ յուլիսի 25-ը։

(15-ին, 19-ին և 22-ին) 3—3

ՀՐԱՒԷՐ

Ջգրաշէնի եկեղեցու պ.պ. ծխականները սրանով երկրորդ անգամ հրաւիրվում են ժողովի նոյն եկեղեցում առաջիկայ կիրակի, ամսիս 16-ին, ցերեկվայ 12 ժամին, խորհրդակցելու հետեւեալ հարցերի մասին։

1) Ջգրաշէնի երկսեռ դպրոցների կարիքների և բարդված պարտքի։

2) Եկեղեցու ներքին և արտաքին բարեկարգութեան։

3) Լսելու ընտրված մասնաժողովի զեկուցումը երէցփոխի 1905 թիւ հաշիւների մասին և 4) Նոր երէցփոխ ընտրելու։

Յիշեցնում ենք դարձեալ, որ առանձին հրաւէրներ չեն ուղարկվելու։

Գէորգ աւագ քահ. Աբուլեանց
Երէցփոխ Ալէքսանդր Քալանթարեան

ՀՐԱՒԷՐ

Համաձայն ազգիս Վեհափառ Հայրապետի սրբատառ կոնդակների և Թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան՝ առաջիկայ կիրակի, յուլիսի 23-ին, ցերեկվայ 12 ժամին Աւետեաց Ջգրաշէն ս. Աստուածածին եկեղեցում լինելու է երեք պատուիրակի ընտրութիւնը, որոնք յետոյ ընտրելու են չորս պատգամաւոր օգոստոսի 15-ին գումարվելիք ռուսահայոց եկեղեցական սահմանադիր ժողովին մասնակցելու համար։ Ուստի խնդրում ենք յիշեալ Ջգրաշէն եկեղեցու 21 տարեկանից սկսած բոլոր արական և իգական սեռին պատկանող ծխականներին (քանիսը որ կան իւրաքանչիւր տանը) շնորհ բերել եկեղեցի նշանակեալ ժամին ընտրութեանը մասնակցելու։ Այս ժողովը զբաղվելու է նաև Ջգրաշէնի երկսեռ դպրոցների հարցով, ուստի և համարվելու է շարունակութիւն նախկին ժողովների՝ միմիայն այս վերջին հարցի վերաբերմամբ։

Աւետեաց Ջգրաշէն եկեղեցու՝
Գէորգ աւագ քահ. Աբուլեանց
Երէցփոխ՝ Ալէք. Քալանթարեան
(շ. կ.) 1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Պատգամաւորների ընտրութիւններ. Վերջին տեղեկութիւններ. Վաղվայ ընտրութիւնները. Ընտրութիւնների շուրջը. Ժողովրդական ցուցակներ. Միջազգային պարլամենտական կոնգրէսը. Պետական Դումայի արձակման առիթով. Մինիստրական կաբինետի ծրագիրը. Օգոստոսի 15-ի ժողովը. Բիւրոկրատիայի նոր ձեռնարկութիւնը. Նամակ Բագուից. Տաշեղներ. Նամակներ Խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Պարսկական թերթերից. Նամակ Անգլիայից. Նամակ Պարսկաստանից. Արտաքին լուրեր. ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

I

Վաղը Թիֆլիսի եկեղեցիներում տեղի կունենան ընտրութիւններ։ Ծխականները կընտրեն որոշ թւով պատուիրակներ, որոնք յետոյ ժողովվելով միասին պէտք է ընտրեն չորս պատգամաւոր կենտրոնական համագումար ժողովի համար։

Անցեալ կիրակի նշանակված ընտրութիւնները չը կայացան, որովհետև եկեղեցիներում ժողովվել էր ծխականների շատ փոքր թիւ։ Իսկ վաղվայ ընտրութիւնը պէտք է կայացած համարվի, որքան էլ ծխական ժողովվելու լինի։

Ուստի, եթէ առանձին արգելքներ տեղի չունենան, վաղը կը վերջանան պատուիրակների ընտրութիւնները Թիֆլիսում, և կը մնայ միայն պատգամաւորների ընտրութիւնը։

II

Այն գործը, որի համար կատարվում են ներկայ ընտրութիւնները, կարևոր է և նշանակալից։

Ներկայ ընտրութիւններով պէտք է հիմք դրվի մեզանում ժողովրդական մշտական ներկայացուցչութեան՝ մի շարք հասարակական գործերի ղեկավարութեան և կարգադրութեան համար։

Ժողովրդական ներկայացուցիչների ժողովը կոչված է կարգաւորելու դպրոցական, կալուածների կառավարութեան վարչական կազմակերպութեան բոլոր գործերը և սահմանելու կանոններ ու հրահանգներ պաշտօնեաների գործունէութեան համար։

Գործը լուրջ է և նրան աջողութեամբ գլուխ բերելու համար անհրաժեշտ է, որ կենտրոնական ժողովը կազմված լինի լայն հայեացքներով և լաւ պատրաստութիւն ունեցող անձերից։

III

Պատգամաւորը պէտք է տոգորված լինի ժողովրդական շահերի լայն ըմբռնողութեան գաղափարով և ընդունակ լինի ծրագիրներ մշակել արմատական բարեփոխութիւններ մտցնելու մեր հիմնարկութիւնների և հաստատութիւնների մէջ։

Տասնեակ տարիների ընթացքում մեր կեանքը առաջ է մղել մի շարք հարցեր, որոնք մինչև այժմ մնում են չը լուծված միայն այն պատճառով, որ մեր հիմնարկութիւնները իրանք իրանց մէջ փակված լինելով մնացել են հեռու գաղափարական լայն հոսանքներից և ժողովրդական թարմ տարրերի գործակցութիւնից։

Եւ ահա լճացած կեանքը և մեռելութեան հասած հիմնարկութիւնները կարօտով սպասում են վերանորոգչական թարմ գործունէութեան, որ պէտք է տայ ժողովրդական ներկայացուցչութիւնը։

IV

Սակայն, որպէս զի ժողովրդական ներկայացուցչութիւնը կարող լինի իր դերը արժանաւորութեամբ կատարել և արդարացնել ժողովրդի իղձերը, անհրաժեշտ է, որ ժողովուրդը իր ընտրութիւնների ժամանակ գիտակցաբար ձայն տայ և ընտրի այնպիսի մարդկանց, որոնք կարող լինեն իսկապէս լրջութեամբ կատարել իրանց վրա դրված պարտաւորութիւնները։

Քաղաքացիներ, ծխականներ. գնալով ընտրութիւնների նայեցէք այդ գործի վրա իբրև հասարակական լուրջ և նուիրական մի գործի վրա և տուէք ձեր քուէն այն անձին, որ կարող է արդարացնել ձեր յոյսերը։

Մէկ կողմ դրէք կողմնակի հաշիւներ և գրգռումներ, աչքի առաջ ունեցէք միայն գաղափարը ու գործը և շիտակութեամբ տուէք ձեր քուէն։

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի ժամանակաւոր ընդհանուր-նահանգապետը դիմել է պաշտօնական գրութեամբ Թիֆլիսի թեմի առաջնորդ Գարեգին արքեպիսկոպոսին խնդրելով յայտնել իրան, թէ ում կարգադրութեամբ և ինչ նպատակով ժողովներ են նշանակվել Թիֆլիսի հայոց եկեղեցիներում, կցելով որ, Թիֆլիսը գտնվելով զինուորական դրութեան մէջ, ժողովները և համախմբումները կարող են կայանալ ընդհանուր-նահանգապետի թոյլատուութեամբ։ Առաջնորդը իր պատասխան-գրութեամբ բացատրել է, թէ ժողովները կայանում են համաձայն կաթողիկոսական երկու կոնդակների և նրանց նպատակն է պատգամաւորներ ընտրել Էջմիածնում օգոստոսի 15-ին կայանալի կենտրոնական ժողովի համար։

—

Մեզ հաղորդում են, որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձուներից հրաժարական են տուել պ.պ. Տիգրան Յովհաննիսեան և Յ. Քաջազնունի։ Ինչպէս յայտնվում է, վերջինիս ընտրութիւնը արդիւնք է եղել թիւրիմացութեան։ Քաջազնունին ապրում է Բագւում, ուր և ունի պաշտօն. ընտրութիւնների ժամանակ երբ դրվում է նրա թեկնածութիւնը, հարց է ծագում՝ ով է երաշխաւոր, որ նա կը թողնէ Բագուն և իր պաշտօնը ու կը գայ Թիֆլիս։ Պատուիրակներից մինը (Լ. Նազարեան) յայտնում է, որ ինքն երաշխաւոր է։ Այժմ բանից դուրս է գալիս, որ պ. Քաջազնունին մտադիր չէ եղել տեղափոխվել Բագուից Թիֆլիս։ Անյայտ է մնում պ. Տ. Յովհաննիսեանի հրաժարականի պատճառը։

—

Ներսիսեան դպրոցի հոգաբարձութիւնը, ինչպէս հաստատապէս հաւաստացնում են մեզ, իր վերջին նիստում, ամսիս 19-ին, որոշել է, հակառակ նախկին հոգաբարձութեան վճռին, արձակել բոլոր ուսուցիչներին և առաջարկել, որ ցանկացողները նորից ստանձնելու ուսուցչական պաշտօնը՝ խնդրագիր ներկայացնեն հոգաբարձութեան։

—

Դերբենդ, 18 յուլիսի

Յուլիսի 17-ի երեկոյեան այստեղից ճանապարհվեցին դէպի Դաշլաղար կոչված տեղը տեղիս բատալիօնի երկու վաշտերը 7 օֆիցերներով։ Այսօր Դերբենդ բերին սպանված օֆիցեր Սարգսեանցի դիակը, որը խոցոտված է սուիններով։ Մանրամասնութիւնները հետեւեալ փոստով։

Դարգիման

—

Բագա գիւղից հաղորդում են, որ աւերված գիւղացիների անտեսութիւնը շատ դանդաղ է վերականգնում։ Նպաստամատոյց յանձնաժողովի գումարներով աջողվել է ձեռք բերել 50 գութան, բայց եզներ գնվել են միայն 82 հատ, որով կարելի է բանեցնել միայն 8 գութան։

ՎԱՂՎԱՅ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Վաղը, կիրակի, Թիֆլիսի եկեղեցիներում պէտք է կայանան Էջմիածնի կենտրոնական ժողովի համար պատգամաւորներ ընտրող պատուիրակների ընտրութիւնները։ Այդ ընտրութիւնների առիթով թէ քաղաքումս և թէ գաւառներում մենք անընդհատ տեղեկութիւններ և թղթակցութիւններ ենք ստանում, թէ ժողովրդի, ընտրողների կամքի վրա գործ են դրվում բռնութիւններ, ճնշումներ, և շատ տեղերում ժողովուրդը, տեսնելով որ ազատօրէն չէ կարող իր քուէն տալ, թողնում հեռանում է առանց իր քուէն տալու։

Յանուն խղճմտանքի և համոզմունքի ազատութեան, յանուն ժողովների ազատութեան գաղափարի մենք բողոքում ենք այդպիսի բռնութիւնների դէմ և ցաւում ենք, որ մեր գործիչները չեն կարողանում հասկանալ, որ ճնշման ներքոյ կատարված ընտրութիւնները չեն կարող համարվել ժողովրդական կամքի արտայայտութիւն։ Եւ ինչ օգուտ այն ժողովից, որի անդամները չեն հանդիսանայ ժողովրդական կամքի արտայայտիչներ։ Մեր կարծիքով, ամենալաւ միջոցը՝ վերջ դնելու բռնութիւններին այն է, որ գործ են դրել Գանձակում, Ախալցխայում և Նոր-Բայազէտում, այսինքն լինել տէր իր համոզմունքի և գործել ինքնուրոյն, ձայն տալով իսկական առաջադէմ և ժողովրդասէր մարդկանց։

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Նովօրոսիյսկ, յուլիսի 10-ին

Երեկ, յուլիս 9-ին, այստեղի աղօթատան մէջ տեղի ունեցաւ Էջմիածնի պատգամաւորի ընտրութեան համար Վլադիկավկազ գնալիք երկու պատուիրակներու ընտրութիւնը, ի ներկայութեան քաղաքիս հայերու մեծամասնութեան և գիւղերէն ու շրջակայ քաղաքներէն եկած տասնի չափ գաւառական պատուիրակներու։

Որովհետև քահանայի հովւութեան պատկանող շրջանը կը բաղկանայ աւելի քան 10 բնակավայրերէ, որոնք հեռու են իրարմէ 20-էն մինչև 100 վերստ, և անկարելի էր շրջանի ամբողջ հայութիւնը ի մի գումարելու, իւրաքանչիւր շրջան ունեցած թւոյն համաձայն 1 կամ 2 ներկայացուցիչ ղրկած էր քաղաք։

Ժողովը բացուեցաւ երեկոյեան ժամը 6-ին նախագահութեամբ տէր-Պօղոս քահանայի, որի առաջին գործը եղաւ կարդալ ու բացատրել Նորին Վեհափառութեան երկու կոնդակները, իմացնել ժողովուրդի պարտականութիւնները ու հաւաքումի պատճառները։ Կոնդակներու ընթերցումէն և բացատրութենէն անմիջապէս յետոյ քաղաքի հայ հասարակութեան կողմէն տասը ներկայացուցիչների ընտրուեցան՝—տէր-Պօղոս քահանայ, պ.պ. Գ. Խաչիկեան, Մ. Բաղդասարեան, Յ. Էլմասեան, Ա. Խօջամիրեան, Ռ. Բէգզադեան, Ա. Մանուկեան, Մ. Քէնտիկեան, Յ. Գասապեան և Փիլոսեան, որոնք միանալով քաղաքի շրջականերէն եկած 11 ներկայացուցիչներուն գաղտնի քուէարկութեամբ և քուէներու բացարձակ առաւելութեամբ, այսինքն 19-ական ձայնով պատուիրակ ընտրուեցան պ.պ. Առ. Բէգզադեան և Մ. Քէնտիկեան, որ արդէն կը պատրաստուին շուտով ճամբայ ելլելու դէպի Վլադիկավկազ պատգամաւորական ընտրութեան ժողովին մասնակցելու։

Վեհափառ Հայրիկի երկրորդ կոնդակը ուշ հասած լինելով այստեղ, իգական սեռը չը կարողացաւ կանոնաւորապէս քուէարկութեան մասնակցիլ և հազիւ 2—3 տիկիններ ներկայ եղողներէն կարողացան քուէարկութեան մասնակցիլ։

Ժողովը ցրուեցաւ երեկոյեան ժամը 12-ին, լի վառ յոյսերով ու ոգևորութիւններով։

Այսօր քաղաքիս հայ օրիորդները և տիկինները երախտագիտական ուղերձ մը պիտի ղրկեն առ Նորին Օծութիւն, Վեհափառ Հայրիկն, կանանց իրաւունքներու հաստատման առիթով։

Եգիպտացի

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Արդէն յայտնի է, որ ամսիս 9 ին քաղաքումս տեղի ունեցան 8 պատուիրակների ընտրութիւնները։ Համարեա նոյն օրերին էլ տեղի ունեցան և շրջակայ բոլոր գիւղերում և ամառանոցներում նոյն պատուիրակների ընտրութիւնները։ Այսպէս, Բորժոմ ամառանոցի կողմից ընտրվեց պ. Դր. Բուդուղեան, Աբասթումանից—Լևոն Գալստեան, Ծուղրութ գիւղից—պ. Յակ. Սաղոյեան, Ծիրայից—Մկր. Սերոբեան, Սազելից—Ստ. Տէր-Նահապետեան, Օրալից—Յովհ. Ղարախանեան, Փոքր-Մամածից—Դիւին. Խընկոյեան, Մեծ Մամածից—Մելք. Սամուէլեան, Ագարից—Յարութիւն Յարութիւնեան և Տամալայից—Սարգիս Կ—եանց։ Քաղաքացիների հետ միասին պատուիրակների թիւը 18 է։ Կիրակի, ամսիս 16-ին, կէսօրից յետոյ տեղի ունեցաւ թէ քաղաքիս և թէ շրջակայ գիւղերի պատուիրակների միացեալ ժողով մի պատգամաւոր ընտրելու։ Միաձայն ընտրել են պ. Մանանդեանցին, որը իբրև Ախալցխայի գաւառի կողմից ներկայացուցիչ մասնակցելու է Էջմիածնում օգոստ. 15-ին կայանալիք ռուսահայոց կենտրոնական ժողովին»։

—

Կարս, յուլիսի 17-ին

Ամսիս 16-ին Կարսի ծխականները և ոչ ծխականները, չափահասները և անչափահասները, խակերը և հասածները, կերթվածները և անկիրթները, գրագէտ և անգրագէտ, արական և իգական, հոգևորական և աշխարհական, աշակերտ և ուսուցիչ, սեդեցցի և արթիկցի, գիւղացի և քաղաքացի և այլ հազար ու մի տեղից կորած-մոլորած երկիրներից, սարերից ու ձորերից, ծանօթ ու անծանօթ արարածներ, կոպիտ ույժեր, բռնապետութեան դէմ կռւող ամենախիստ բռնապետներ, դագանակով գործ վճռողներ... հաւաքված են դպրոցի դահլիճում պատուիրակներ ընտրելու։ Բայց, Տէր Աստուած, ինչ իրարանցում, ինչ խառնակութիւն, ինչ աղմուկ, ինչ շփոթ, գոռում, գոչում։ Ոչ ոք ոչ ոքի չի ճանաչում. ոչ ոք ոչ ոքի չի լսում։ Գերապատիւ նախագահը շարունակ զանգահարում է, «Սուս, լուռ, լռութիւն...» է աղաղակում, բայց լսող չը կայ։ Երեք անգամ թողեց ամբիոնը և հեռացաւ, բայց նորից քաշ տալով բերին նստացրին։ Հայր սուրբը մի քանի անգամ պահանջեց որ ոչ-ծխականները, անչափահասները, օտարականները և վերջապէս իրաւունք չունեցողները հեռանան ժողովից։ Բայց ձայն մուրացող ագիտատորները չէին թոյլ տալիս ապօրինի անհատներին հեռանալու։

Չը գիտեմ ինչ հիման վրա մի դսեղցի, մի արթիկցի, մի Արարատ, մի Մասիս եկել են ժողով. դեռ այդ բաւական չէ, ներգործական դեր էլ են խաղում և թեկնածուների ցանկի մէջ էլ մտել։ Դսեղցին բարձրացել է մի պատի գլուխ և այնտեղից է գոռում։ Արթիկցին մի ուրիշ անկիւնում առանձին պատրաստութիւն է տեսնում։ Կարճ ասենք, բազմաթիւ կուսակցութիւնների բաժանվելով՝ խռովութիւնը հասցրին ծայրայեղութեան։ Ժամանակ առ ժամանակ ղոչի պէս իրար էին դիպչում, ձեռնափայտերը օդի մէջ ճօճացնում, ատրճանակների անունն տալիս, և հակառակ խօսողներին լռեցնում։ Մի հայկական կուսակցութիւն, որ ճանաչում է իրան պաշտօնական մարմին, հայ ազգի միակ ներկայացուցիչ, ամենաեռանդուն թափով բռնանում էր իր գործը առաջ տանելու։ Օր առաջ թռուցիկներով նախապատրաստել էր ժողովրդին և տպել էր տուել իր թեկնածուների ցանկը՝ 16 հոգի, որոնք ժամանակին ամենայն հնազանդութեամբ մոմի պէս պատրաստ էին ծռվել հրամայող աղաների առաջ։ Հայր Նախագահը, երբ չը կարողացաւ բազմաթեսակ ապօրինութիւնների առաջն առնել, չը կարողացաւ ոչ իրաւասուներին դուրս անել տալ, ճարահատեալ թողեց ժողով և հեռացաւ։ Նրան հետևեցին հասարակութեան բանիմաց մասը։

Այս խայտառակութիւնից յետոյ մնացածները սև-Կարօյին նախագահ ընտրելով շարունակում են ժողովը և վերջացնում իրանց ուզածի նման։ Այսօր մի բազմաստորագիր բողոք գնաց Վեհափառ Հայրապետին, որ բեկանէ այդ ապօրինի և անկանոն ժողովի ընտրութիւնը։

Մի ժողովական

—

Նոր-Բայազէտ, յուլիսի 18-ին.—Յուլիսի 15-ին, տեղիս գործակալի պաշտօնակատար Ս. քահանայ Ազարեանցի հրաւէրով կայացաւ մեր քաղաքի երկու եկեղեցիների ծխական ժողովը՝ պատգամաւորներ ընտրելու օգոստոսի 15-ին Էջմիածնում համաժողովին մասնակցելու համար։ Հազարից աւելի ծխականներից հազիւ ժողովին ներկայ էին 400 հոգի, որոնք նախ թերթիկներով ընտրեցին 10 հոգի պատուիրակներ և ապա սրանք գաւառի պատուիրակների հետ խառն ժողովում պէտք է ընտրէին 3 հոգի պատգամաւորներ։ (Չորրորդ ընտրելին պէտք է տայ Դարաչիչագի մասը)։

Ժամը 10-ին մօտ էր, երբ Ազարեանց քահանան ժողովը բացեց և մի քանի խօսքով բացատրելով հանդիսականներին ժողովի նպատակը՝ կարդալ տուեց Վեհափառի կոնդակները, առաջարկելով միևնոյն ժամանակ ընտրել ժողովին նախագահ։ Բոլորի հաճութեամբ՝ միաձայն ժողովի նախագահ ընտրըվեց պ. Մ. Աւետեանը, որը խելացի կերպով նախագահեց։ Շատ աղմուկներից յետոյ, որ մեր ժողովրդի սովորական բանն է, առաջարկված թեկնածուներից թերթիկներով ձայներ ստացան և ընտրված համարվեցին՝ 1) Մ. Աւետեանց, 2) Ս. Բաաիկեանց, 3) Հ. Տէր-Միքայէլեանց, 4) Ս. Սարանգիւլեանց, 5) Խ. Բունիաթեանց, 6) Վ. Աղաջանեանց, 7) Հ. Մալաքեանց, 8) Տ. Տէր-Միքայէլեանց, 9) Գ. Բաաիկեանց և 10) տիկին Զարուհի Նալբանդեանց։ Իսկ անձնափոխանորդներ՝ տ. Մարիամ Զալդրանեանց և պ. Վ. Յօկոլակեանց։

Որովհետև այդ օրը արդէն ուշ էր, ժողովը պատգամաւորների ընտրութիւնը թողեց միւս օրվան, երբ մանաւանդ պէտք է հաւաքվէին նաև գաւառի պատուիրակները, 30-ից աւելի գիւղականներ։ Սակայն միւս օրը, կիրակի, ներկայացան գիւղերից 20—23 հոգի միայն, որոնք մեր քաղաքի 10 պատգամաւորների հետ գաղտնի քուէարկութեամբ ընտրեցին պատգամաւորներ՝ Խորէն վարդապետ Մուրադբէգեանցին, Մ. Աւետեանցին և Յ. Տէր-Մարտիրոսեանցին։ Ընտրութիւնը շատ աջող կարելի է համարել. գոհ են բոլոր քաղաքացիք։ Մի բան միայն հաճելի չէր, այն, որ տեղական երիտասարդներ, երկու կուսակցութիւնների բաժանված, աշխատում էին իւրաքանչիւրը իր կողմնակիցները անց կացնել։ Սակայն յաղթեց մի զօրեղ կուսակցութիւն որի ձեռքին է գրեթէ ժողովրդական գործունէութեան ղեկը մեզանում... Բայց մեր համեստ կարծիքով աւելի լաւ էր, որ այդ կուսակցութիւնները (երկուսն էլ մի ծրագրի համաձայն գործողներ) միանային և գործէին համերաշխ կերպով, միաձայն, քան թէ միմեանց հրապարակապէս անուանարկէին և իրար դէմ գնային։

Ինչպէս տեսնում է ընթերցողը, ընտրվածների ցանկի մէջ մտել են նաև երկու կանայք. դա և հաճելի է և շատ ուրախալի, քանի որ մեր յետ ընկած քաղաքի խաւար մթնոլորտում յանկարծ երևան է գալիս կանացի ընտրութիւնը։

Յիշելու է նաև, որ նորընտիր պատգամաւորներից երկուսը—Խորէն վ. Մուրադբէգեանը և Յ. Տէր-Մարտիրոսեանցը—որովհետև քաղաքիցս բացակայ էին, ժողովը հեռագրով տեղեկացրեց նրանց։

Գ. Մինասեանց

—

Ախալքալաք (Գօրու գաւառ), յուլիսի 17-ին.—Գօրու Ախալքալաքի գործակալութեան գիւղերում արդէն կատարվեցին պատուիրակների ընտրութիւններ և այդ ընտրութեանց հետևանքը—պատուիրակների ցուցակը ուղարկվեց Գօրի առաջնորդական փոխանորդին, իսկ նա—հայր փոխանորդը—նշանակել է ժողով յուլիսի 23-ին իր վիճակի բոլոր պատուիրակների, որոնք պիտի ընտրեն մի պատգամաւոր Էջմիածնում օգոստոսին գումարվելիք սահմանադիր ժողովին մասնակցելու։ Մեզ հասած տեղեկութիւններից երևում է, որ ընդհանրապէս գիւղերում ժողովներին (ընտրութիւնների ժամանակ) նախագահել են գիւղական քահանաներ, և ժողովները եղել են բաւականին բազմամարդ, իսկ Ախալքալաքում հայր գործակալի առաջարկութեամբ ծխական ժողովը ընտրեց նախագահ տեղական հայոց դպրոցի հոգաբարձու Ալ. Դանդուրեանին։ Ախալքալաքից պատուիրակներ ընտրվեցին Յ. ք. Միրիմանեան և Սող. Նազարեան. Կաւթիսխեվից ընտրվել է Յով. Իրեմեան, Նիչբիսից—Դաչօ Մենարդեան, Ջիգուրից—Յար. Սալոդեան, Քախվրելից—Էսա. Վանեցեան, Դուեսից—Զուրաբ Տուրեան, Ղարաղաջիից—Արտեմ Մազմեան, Կասպիից—Գէորգ Մինարդեան։

—

Կարսի ընտրութիւնները բեկված են Վեհափառ Կաթողիկոսի կողմից և նշանակված են նոր ընտրութիւններ։

Պէտք է յուսալ, որ ընտրողները կաշխատեն խուսափել եղած անպատեհութիւններից։

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ ԿՈՆԳՐԷՍԸ

Լոնդօնում, յուլիսի 10-ին, կայացաւ միջազգային պարլամենտական կոնգրէսը, որ իր նիստերը բացեց Ուեստմինստրեան արքայական պալատի մէջ։

Կոնգրէսին մասնակցում էին մօտ 300 պատուիրակներ եկած Աւստրիայից, Բելգիայից, Կանադայից, Դանիայից, Ֆինլանդիայից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Յունաստանից, Հոլլանդիայից, Ունգարիայից, Իտալիայից, Մեքսիկայից, Նորվեգիայից, Պորտուգալիայից, Ռումինիայից, Սպանիայից, Սերբիայից, Շվեդիայից, Շվէյցարիայից, Միացեալ-Նահանգներից և ռուսական Պետական Դումայից։ Կոնգրէսի նպատակն է միջոցներ որոնել միջազգային խաղաղութիւնը ապահովելու համար։ Ողջոյնի ճառը խօսեց անգլիական մինիստր-նախագահ Կեմպբէլլ-Բաններման. այդ ճառից առաջ կը բերենք այն կտորը, որ վերաբերում է Պետական Դումային։

«Ես կամենում եմ արտայայտել իմ կողմից—և ես վստահ եմ, որ ինձ համամիտ կը լինեն այս մեծ և պատմական ժողովին բոլոր մասնակցողները—խորին ուրախութիւն այն առիթով, որ ուրիշ հիւրերի մէջ մենք տեսնում ենք և ամենամատաղ պարլամենտի՝ ռուսական Դումայի ներկայացուցիչներին (աղմկալի և երկարատև ծափահարութիւններ)։ Կոնգրէսը կատարելապէս գիտակ է այն պայմաններին, որոնց մէջ նրանք եկել են։ Այն բանի մէջ, որ ռուսական պարլամենտի առաջին պաշտօնական ակտը՝ Ռուսաստանի ներքին կեանքին չը պատկանող հարցերի մէջ, եղաւ իր պատգամաւորներին ուղարկելը Ուեստմինստերի պալատը, պէտք է տեսնել մի բարի նշան խաղաղութեան մեծ սկզբունքների հաստատութեան համար։ Ես չեմ կամենում մեկնաբանել այսօր ստացված լուրերը (Դումայի արձակման մասին). այժմ ոչ դրա տեղն է, ոչ ժամանակը։ Մեր գործը չէ պախարակել կամ հաւանել։

«Մենք բաւականաչափ ծանօթ չենք գործերի դրութեան հետ, որպէս զի կարողանանք կամ արդարացնել կամ քննադատել։ Բայց մենք կարող ենք ասել նրանց, որոնք վստահանում էին պարլամենտարական սիստեմին և նրա վրա էին դնում իրանց յոյսը, որ նոր հաստատութիւնները յաճախ ունեցել են անհանգիստ, երբեմն նաև մրրկալից երիտասարդութիւն։ Դուման յարութիւն կառնէ այս և այն ձևով. Դուման մեռաւ, կեցցէ Դուման!» (երկարատև ծափահարութիւններ)։

Մինիստր-Նախագահի ճառից յետոյ, երբ պատուիրակները ընդունեցին Էդուարդ VII թագաւորի ուղերձի բնագիրը, Մաքսիմ Կովալեվսկին խօսք խնդրեց և հետևեալ յայտարարութիւնն արեց։ Նա և իր ընկերները—ասաց նա—ընտրված էին Դումայից մասնակցնելու ընդհանուր խաղաղութեան պաշտպանութեան մեծ գործին: Իբրև Դումայի անդամներ նրանց պարտաւորութիւնն էր՝ վերջ տալ բիւրոկրատիական կամայականութեան ռեժիմին Ռուսաստանում և դնել նրա տեղ ազատութիւնը և իրաւունքը (ծափահարութիւններ): Նրանք ուղարկվեցին Անգլիա՝ մասնակցելու ազատութեան և արդարութեան մեծ գործին, որ արտայայտվում է միջազգային խաղաղութեան պահպանութեան մէջ: Մենք երջանիկ էինք նրանով, որ մեզ էր յանձնված այդ միսիան, և յոյս ունէինք աշխատել կօնգրէսի միւս անդամների հետ միասին, բայց մեր լիազօրութիւններին կտրուկ և խստօրէն վաղաժամ վերջ տուին (համակրութեան արտայայտութիւններ): Մեր զգացումները չեն փոխվել, բայց մեր պարտաւորութիւնները այլ են դարձել: Մենք պարտաւոր ենք անմիջապէս վերադառնալ հայրենիք, միանալու այն կռւին, որ մղվում է ազատութեան և արդարութեան սկզբունքների պահպանութեան և յաղթանակի համար, որոնք կը տան մեզ ապագայում հնարաւորութիւն աշխատել միասին ուրիշ ազգերի ներկայացուցիչների հետ:

Լաֆօնտէն (Բելգիա) առաջարկեց կօնգրէսին որոշել, որ Դումայի եկած ներկայացուցիչները համարվում են կօնգրէսի անդամներ, չը նայելով Դումայի արձակման: Կօնգրէսը ընդունեց առաջարկը, բայց ռուս պատգամաւորները կարճ ժամանակից յետոյ հեռացան դահլիճից: (Рус. Вѣд.)

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԱՐՁԱԿՄԱՆ ԱՌԻԹՈՎ

—Վիբորգի խորհրդակցութեանը ներկայ չեղած պատգամաւորների թւից, «Народъ» լրագրի ասելով, 40 հոգուց աւելին յայտարարութիւններ են ուղարկել իրանց ստորագրութիւններն ևս միացնել ժողովրդին ուղղված դիմումը ստորագրողների թւին:

—«Рѣчь» լրագրի վերջին համարներից մէկում տպագրված է Պետական Խորհրդի հինգ անդամների յայտարարութիւնը. «Հաստատ համոզված լինելով, որ անհրաժեշտ է Ռուսաստանը բազմակողմանի կերպով վերանորոգել, երկար տատանումներից յետոյ, մենք մտանք վերակազմված Պետական Խորհրդի կազմի մէջ: Այդ տատանումների պատճառը գլխաւորապէս այն էր, որ Պետական Խորհրդի ոչ կազմը և ոչ էլ ֆունկցիան չեն համապատասխանում երկրորդ պալատի մասին ունեցած մեր գաղափարին, որ համապատասխանում է ռուսաց կեանքի պայմաններին: Այնուամենայնիւ, մենք պարտք համարեցինք մասնակցել Պետական Խորհրդի գործունէութեանը լոկ նրա համար, որպէս զի կարողութեան չափ, արդարացնելով մեզ ընտրողների վստահութիւնը, պաշտպանենք Պետական Դումայի այն օրինագծերը, որոնք հիմնված կը լինէին սահմանադիր-ռամկավար կազմի սկզբունքների վրա: Այժմ ժողովրդական ներկայացուցչութեան գործունէութեան մէջ տեղի ունեցաւ հարկադրված ընդհատում: Պետական Դուման կարող է հաւաքվել նոր կազմութեամբ եօթ ամսից յետոյ միայն: Այդ ժամանակամիջոցում երկիրը, իր ներկայացուցիչների արձակման պատճառով, զրկված կը լինի հնարաւորութիւնից հաստատել 1907 թւի բիւջէն, ապահով ադմինիստրացիայի օրինական գործունէութիւնը, իսկ, որ գլխաւորն է, ստեղծել այնպիսի օրէնքներ, որոնք, ինչպէս, համապատասխանէին ամբողջ ազգաբնակութեան անհրաժեշտ պահանջներին: Բիւրոկրատական կազմին վերադառնալը, թէև ժամանակաւորապէս, բայց և չափազանց երկարատև կերպով, որ դատապարտված է արդէն ընդհանուր գիտակցութեան մէջ, վերադարձը բիւրոկրատական օրէնսդրական ստեղծագործութեան, որը վաղուց է ապացուցել իր անկարողութիւնը, մեր խորին համոզմունքով, չէ կարող կանգնեցնել Ռուսաստանը ոչ կանոնաւոր զարգացման շաւղի վրա, ոչ էլ խաղաղեցնել ազգաբնակութիւնը: Այդպիսի պայմաններում մնալ Պետական Խորհրդի կազմի մէջ, երբ օրէնսդրական գործունէութիւնը իրագործվելու է միայն գործադիր իշխանութեամբ, մենք անկարելի ենք համարում: Դա արդէն կը նշանակէր ընդունել ոչ միայն նպատակայարմար և ժամանակակից Պետական Դումայի արձակումը, այլ և յանձն առնել մեզ վրա բարոյական պատասխանատուութիւն այն հետևանքների համար, որը կարող է առաջ բերել այդ ակտը մեր դժբաղդ հայրենիքում: Պետական Խորհուրդը արձակված չէ, բայց մենք չենք կարող նրա անդամը լինել, որովհետև ժողովրդական ներկայացուցչութեան գործունէութեան ընդհատումը ներկայ ժամանակներում, մեր կարծիքով, սպառնում է պետութեանը սարսափելի փորձութիւններով: Բացի դրանից, որովհետև մինիստրութեան և ժողովրդական ներկայացուցիչների միջև ծագած կօնֆլիկտը կարող է լուծումն ստանալ ամբողջ ժողովրդի նոր ընտրութիւնների միջոցով, այդ պատճառով մենք չենք կարող յենվել մեր նախկին ընտրութեան վրա, որը տեղի է ունեցել բոլորովին ուրիշ պայմաններում: Յուլիսի 12-ին 1906 թ.: Ստորագրել են՝ Ն. Շիշկօ, Դ. Վիկօվսկի, Ա. Լաղպօ-Դանիլևսկի, Վ. Վերնադսկի և Ա. Պերեկշին»:

ՄԻՆԻՍՏՐԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏԻ ԾՐԱԳԻՐԸ

«Рус. Сл.» լրագրի աշխատակիցը յուլիսի 15-ին խօսակցութիւն է ունեցել հասարակական գործիչներից մէկի հետ, որին պրեմիեր Ստօլիպինը հրաւիրում է իր կաբինետի անդամ: Նրա ասածից պէտք է եզրակացնել, որ Լվօվը և Ստախովիչը արդէն համաձայնութիւն են տուել: Հասարակական գործիչները մտնում են կաբինետի մէջ հետևեալ պայմաններով.

Պետական Դումայի օրէնսդրական նիստերը պէտք է սկսվեն սեպտեմբերից ոչ ուշ, յամենայն դէպս ոչ փետրվարի 20-ին: Կայսերական ուկազով վերացվում է մահուան պատիժը: Պետական Դումայի մասին եղած օրէնքները պէտք է վերաքննվեն, նրա իրաւունքները ընդարձակելու մտքով, միևնոյն ժամանակ պէտք է վերաքննվեն Պետական Խորհրդի մասին եղած օրէնքները՝ նրա իրաւասութեան սահմանները կրճատելու մտքով: Դատարանները վերակազմվում են հաշտարար հաստատութիւնների հիմունքներով: Հրէական նստակեցութեան սահմանները վերացվում են, և հրէաները ստանում են բնիկ ազգաբնակութեան հետ համահաւասար իրաւունքներ: Զինւորական դրութիւնները վերացվում են, նոյնպէս և արտակարգ և սաստկացրած պահպանութիւնները: Վարչական ստորին հաստատութիւնների մէջ ծայրերկրներում, պետական լեզուի հետ միասին, մտցնվում է և տեղական լեզուն: Զեմսկի հաստատութիւնների համար ընտրութիւնները կատարվում են ընդհանուր ընտրողական հիման վրա: Շնորհվում է ամնիստիա, թէև ոչ լիակատար: Ագրարական բարեփոխութեան հիմք է ընդունվում Կուտլերի նախագիծը: Անմիջապէս կը մշակվեն օրինագծեր գործադուլի, ժամուլի ազատութեան մասին և այլն, ապագայ Դումային ներկայացնելու համար: Մամուլի վրա պատիժներ նշանակվում են բացառապէս դատարանով:

Այդ բոլոր հիմնական օրէնքները արդէն մշակված են Ստօլիպինի գիտութեամբ, և, ըստ երևոյթին, նրա կողմից ընդունելութիւն կը գտնեն:

ՕԳՈՍՏՈՍԻ 15-Ի ԺՈՂՈՎԸ

Այսպէս ուրեմն առաջիկայ ժողովի համար զբաղման խիստ շատ նիւթ կը լինի, և առաջնակարգ կարևորութիւն ունեցող նիւթ, նոյն իսկ այն դէպքում, երբ նրա գործունէութիւնը սահմանափակվի 14 միաբանների ցանկացած սահմաններում: Ո՞ւր պէտք է գումարվի ժողովը և ինչքա՞ն ժամանակ պէտք է տևէ, «հրահանգի» մէջ չէ ասված, և ինձ համար պարզ չէ, թէ ինչ են մտածել «հրահանգը յօրինողները»՝ պարագմունքներ որոշելով «առաջիկայ նստաշրջանի» համար: Արդեօք նրանք մտածում են, թէ մեր «կենտրօնական ժողովը» մի տեսակ պարլամենտ պէտք է լինի, որ մի քանի ամիս նստաշրջան ունենալուց յետոյ՝ պէտք է ցրվի, և դարձեալ մի քանի ամիս յետոյ ժողովվի ու նոր նստաշրջան կազմէ: Հետաքրքրական է, ո՞րտեղ պէտք է գտնեն այն պարապ մարդիկ, որ գան այդպէս ամիսներով նստեն ու ազգի ցաւերը հոգան, և ո՞րտեղից պէտք է միջոցներ գտնեն նրանց պահելու համար: Յայտնի է, որ նախորդ Դումայի ընտրութիւններին շատերը հրաժարվում էին պատգամաւոր ընտրվելուց՝ Պետերբուրգում ստանալիք օրական 10 րուբլի ապրուստի դրամը շատ քիչ համարելով և միջոց չունենալով՝ իրանց գործն ու ընտանիքի պահպանութեան հոգսը թողնելու: Ո՞րտեղից պէտք է ստանան գոնէ նոյնպիսի 10 րուբլիներ հայ պատգամաւորները և ինչպէս պէտք է բժիշկ, փաստաբան, վաճառական, արհեստաւոր մարդիկ, թէկուզ քահանաներ և ուսուցիչներ, իրանց գործը թողնեն և շաբաթներով կամ ամիսներով ժողովի հետ լինեն: Հայրապետական մի նոր կօնդակով կարգադրվում է, որ ընտրող հասարակութիւնները հոգան իրանց պատգամաւորների ծախքը: Ի՞նչպէս պէտք է վճարեն արդեօք հասարակութիւններն այդ ծախքը և ո՞վ պէտք է ժողովէ: Շատերը մտածում են, անշուշտ, թէ պատգամաւորները էջմիածնում կը ժողովվեն և մի քանի շաբաթ կը վայելեն այն ձրի հացից, որ պորտաբոյծ միաբանները տարին տասներկու ամիս վայելում են, կամ իրանց մասը կը ստանան նրանց ստացած չաղ-չաղ ռոճիկներից: Բարի ախորժակ:

Երևակայում են, թէ էջմիածնի կալուածներն ու եկամուտները անսպառ հարստութեան աղբիւրներ են. բաւական կը լինի աշխարհական մարդոց ձեռքը տալ, մի քանի մասնագէտներ մտցնել գործի մէջ, որ միջոցներ ստեղծվեն թէ ճեմարանն ու վանական ուրիշ հաստատութիւնները պահպանելու, թէ դպրոցական մի մեծ ֆոնդ կազմելու՝ բոլոր ծխական դպրոցների պահպանութեան համար, թէ ազգային ժողովի և նրա պատուիրանակատար անձանց ու մարմինների ծախքերը հոգալու,— մանաւանդ երբ մի քանի տասնեակ ձրիակեր վարդապետների ու եպիսկոպոսների ձեռքը ցուպ տան և ուսին մախաղ ձգեն, վանքից դուրս անեն: Բայց թող փոքր ինչ մօտենան գործին՝ նոյնպիսի յուսախաբութիւն պէտք է յառաջ գայ, անշուշտ, ինչպէս յուսախաբվեցին նրանք, որոնք մի քանի տարի առաջ երևակայում էին, թէ միլլիոններ կան էջմիածնի գանձարանում: Յամենայն դէպս ներկայ պայմաններում ո՛չ մի կենտրօնական ժողով միջոց չի ունենայ երկու շաբաթից աւելի մի տեղ խմբված մնալու, և այդքան ժամանակամիջոցում հազիւ կարելի լինի մեր շօշափած դպրոցական խնդիրների էական կէտերը պարզել, ծխական դպրոցների ծրագիրն ու կանոնադրութիւնը քննել և այս բոլորի զարգացման ու գործադրութեան համար միջոցներ ձեռք առնել:

Այնուամենայնիւ, իմ սեփական կարծիքով, ինչպէս առաջ ակնարկեցի, կարելի և ցանկալի է, որ ժողովի զբաղման նիւթ լինեն որոշ չափով նաև տնտեսական խնդիրներ: Ցանկալի է, օրինակ, որ ձեռնհաս անձերից, հոգևորական թէ աշխարհական, մի տնտեսական խորհուրդ կազմվի, եկեղեցական բոլոր կալուածների տեսչութեան և վերահսկողութեան գործը նրա ձեռքում կենտրօնացվի. հնարաւորութիւն տրվի նրան կալուածների և եկամուտների կանոնաւոր հաշիւներ կազմելու, նրանց բարգաւաճման և շահագործման համար հնարներ մտածելու և իրագործելու, ժամանակ առ ժամանակ հսկիչներ և հաշուեքննիչներ ուղարկելու ամեն կողմ: Ցանկալի է, որ լուրջ ձեռնարկութիւններ լինեն մի քանի ժամանակակից և անյետաձգելի խնդիրներ լուծելու համար, ինչպէս է վանական գիւղերի բնակիչների հետ հողային հարցերում համաձայնութեան գալը կամ անբնակ հողերի վրա մարդիկ բնակեցնելը. լուրջ ձեռնարկութիւններ լինեն մի քանի մեծ և անարդիւն մնացած կալուածներ արդիւնաւոր դարձնելու, արդիւնքի նորանոր աղբիւրներ ստեղծելու համար: Ձեռնարկութիւններ լինեն վանքի և բոլոր եկեղեցական հաստատութիւնների տնտեսութիւնը կարգի դնելու համար, եկամուտների կանոնաւոր գործադրութեան համար, դպրոցների տնտեսական վիճակը բարւոքելու և փոքր ի շատէ ապահովելու համար և այլն: Բայց եթէ սկզբից և եթ խնդիրն այնպէս պէտք է դրվի, թէ ժողովրդի ներկայացուցիչները գալիս են կալուածները եկեղեցուց խլելու և ժողովրդից ընտրված մարդոց ձեռքը տալու՝ անտեղի և խիստ վտանգաւոր շփոթութիւնների դուռ միայն կը բացվի, ի հարկէ, և ոչ մի հետևանքի չենք հասնի: Ի՞նչ տալ է խլել. ումի՞ց պէտք է խլվեն և ո՞ւր տարվեն:—Երեք տարի առաջ, երբ մեր եկեղեցական կալուածները գրաւեցին՝ բողոք բողոքի վրա տեղաց Տաճկաստանում, Պարսկաստանում, Հնդկաստանում, Ամերիկայում և աշխարհի բոլոր կողմերում ապրող հայերից, որոնք հաստատում էին, թէ իւրաքանչիւր եկեղեցական կալուած և եկեղեցական հաստատութիւն հայոց ընդհանուր եկեղեցու սեփականութիւնն է, անջնջելի կտակներով եկեղեցու վրա գրված, և ոչ ոք իրաւունք չունի տէր ու կառավարիչ լինելու այդ կալուածներին և հաստատութիւններին, նրանց եկամուտները ըստ քմաց գործադրելու, մանաւանդ թէ հանելու և ուրիշ նպատակների յատկացնելու: Այժմ ո՞ր հիման վրա ռուսահայերից հապճեպով կազմված մի ժողով բացարձակ իրաւունքներ պէտք է բանեցնէ, թէկուզ ամենափոքր մի կալուածքի սեփականութեան հարցը որոշէ, եկեղեցական կազմի ամբողջ անցեալը դատապարտէ և մի նոր կազմակերպութեան կողմից ոսկի սարեր խոստանայ և երաշխաւորէ: Փոքր ի շատէ պարզ գաղափար պէտք է միայն ունենալ խնդրի մասին և հասուն դատողութիւն՝ հասկանալու համար, որ վերջերս այնչափ յաճախ լսվող ճառերը, թէ «ազգի սեփականութիւնը պէտք է ազգին վերադարձնել», անտեղի դատարկաբանութիւններ են, և առաջիկայ ժողովը այս տնտեսական հարցերի մէջ ևս որոշ ծառայութիւն մատուցանել կարող է այն դէպքում միայն, երբ հանդիսանայ իբրև եկեղեցու պէտքերի մասին եկեղեցու պաշտօնեաների հետ ամենայն համերաշխութեամբ խորհրդակցող, նրա բարեզարդութեան և եկեղեցական հաստատութիւնների բարեկարգութեան ու ապահովութեան նախաձեռնողի մի մարմին, և ոչ մի բանի վրա չը հիմնված ու միանգամայն անիրագործելի իրաւասութիւններ չը վերագրէ իրան:

Գանք վերջապէս այն խնդրին, որ ըստ հրահանգի դպրոցականից և տնտեսականից յետոյ երրորդ տեղը պէտք է բռնէ «առաջիկայ նստաշրջանի» առաջ դրված «անյետաձգելի կարևորութիւն ունեցող խնդիրների» շարքում: Հրահանգի մէջ պարզ չէ ըստ իւրեան, թէ ինչ է նշանակում «թեմական ժողովները կարգաւորել». իսկ այն բացատրութիւնը, որ տուել է «Ալիքի» մէջ (№ 38) «հրահանգը յօրինողների» կողմից պ. Ս. Տ., շատ ձախող է, ինչպէս նկատել եմ ուրիշ առթիւ իմ նախորդ յօդուածում, և իբրօք «անյետաձգելի խնդիրներ» չէ շօշափում: Նա հանդէս է եկել այդտեղ իր սիրած թեմայով,— ծխական ժողովներ, թեմական ժողովներ, կենտրօնական ժողով,— և կամենում է մեր եկեղեցական վարչութեան առանց այն էլ աւելորդ բարդութիւններ ունեցող բիւրոկրատիական կազմի վրա նոր բարդութիւններ աւելացնել. անշարժ է պահում սինօդն ու կօնսիստորիաները և ինչպէս սինօդի գլխին դնում է կենտրօնական ժողովը, այնպէս էլ կօնսիստորիաների գլխին թեմական ժողովներ (ինչո՞ւ ոչ նաև հոգևոր կառավարութիւնների գլխին վիճակային ժողովներ), և հետևաբար ընտրութիւններ է կատարել տալիս անվերջ ընտրութիւններ: Ընտրութիւն ծխական ժողովի, թեմական ժողովի, կենտրօնական ժողովի համար. ընտրութիւն քահանայի, գործակալի, փոխանորդի, առաջնորդի, կաթողիկոսի համար. հոգաբարձական և երեցփոխանական ընտրութիւններ, աւելացրէք քաղաքային ընտրութիւնները՝ մօտիկ ապագայի համար խոստացված զեմստվային և Դումայի ընտրութիւնները, և կը տեսնէք, որ հայ ընտրողն այսուհետև քուէտուփի մօտից այլ ևս տուն չը պէտք է գնայ, լաւ կը լինի որ անկողինն էլ հետը տանի: Ես գոնէ այս բոլոր ձևականութիւնների մէջ նպատակ շատ քիչ եմ տեսնում և, ինչպէս մի անգամ յիշել եմ, նոր կարգեր հաստատելուց առաջ կարևոր կը համարէի հինը վերացնել և հիմնովին կերպարանափոխել: Մեր սինօդն ու կօնսիստորիաներն ու հոգևոր կառավարութիւններն իսկական գործերով՝ հովված ժողովրդի եկեղեցական կեանքով ու հոգսերով շատ քիչ են զբաղվում, եկեղեցական հաստատութիւնների կառավարութեան և հաշիւների վրա ձևական հսկողութիւն են միայն կատարում, ըստ մեծի մասին բաւականանում են թղթեր գրելով: Պէտք է վերացնել այդ ատեանները և նրանց տեղը դնել կենտրօնական խորհուրդ, թեմական խորհուրդներ, վիճակային խորհուրդներ՝ հոգևորական և աշխարհական ընտրեալներից բաղկացած: Իսկ այդ նպատակին չի հասնի առաջիկայ ժողովը նրանով, որ սինօդի հին անդամների տեղ նորերին կընտրէ և հրամաններ կը տայ թեմական ժողովներ հրաւիրելու համար, այլ նոր մի յանձնախումբ կընտրէ գիտակ անձերից մեր ամբողջ եկեղեցական վարչութեան համար մի նոր կանոնադրութիւն, մի նոր սահմանադրութիւն մշակելու, որ կը քննէ ժամանակին ապագայ եկեղեցական-ազգային ընդհանուր ժողովը: Դրա փոխարէն ժողովի առաջ դրված կը լինեն մի շարք անյետաձգելի խնդիրներ, որոնք բղխում են մայիսի 10-ի կօնդակից: Ինչպէ՞ս պէտք է ժողովուրդը առաջնորդներ, փոխանորդներ ընտրէ. ինչ պայմաններով պէտք է ընտրված վարդապետները եպիսկոպոս ձեռնադրվեն: Երբ մի ծխական համայնք քահանայ է ընտրում, քահանայացուները սովորաբար նրա աչքի առաջ են. համայնքը ծանօթ է նրանց անցեալին և կամ հեշտութեամբ ծանօթանալ կարող է ու այնպէս ընտրութիւն կայացնել: Երբ կաթողիկոս է ընտրվում՝ բոլոր եկեղեցականների մէջ ամենից աչքի ընկնող մարդը պէտք է ընտրվի. ընտրելիների կեանքն ու գործունէութիւնը սովորաբար հրապարակի վրա է լինում և ընտրողներից շատերին ծանօթ. միւսներին ևս դժուար չէ ծանօթանալ ու այդպէս մօտաւոր բարեխղճութեամբ մասնակցել ընտրութեան: Բայց երբ էջմիածնում նստած կամ հեռու վիճակներում պաշտօն վարած եպիսկոպոսներից ու վարդապետներից առաջնորդ և փոխանորդ պէտք է ընտրվի այս կամ այն թեմի և վիճակի համար, ընտրողների առաջ դրվում է ընտրելիների մի ցուցակ, որոնց մեծագոյն մասին նրանք ամենևին չեն ճանաչում և միջոցներ էլ չունեն հեշտութեամբ ճանաչելու: Ատրպատականի վերջին տարիների ընտրութիւնները ցոյց տուին, թէ որչափ թիւրիմացութիւններ կարող են յառաջ գալ դրանից և ապարդիւն փորձեր լինել: Մի քանի փոքր ի շատէ ծանօթ հոգևորականներ կան, առաւելապէս լրագիր կարդացողների շրջանում. մի քանի հոգևորականներ, որոնք այս կամ այն կուսակցութեան մարդն են համարվում. միւսներին ինչ պէտք է անեն. կամ երբ երկու վիճակ, երկու թեմ միևնոյն անձին են ընտրում՝ որ՞ ձայնը պէտք է գերակշռէ և որ՞ կողմը գնայ ընտրեալը: Մի վարդապետի թեմական առաջնորդ են ընտրում. պէ՞տք է արդեօք առանց այլևայլութեան եպիսկոպոս ձեռնադրվի. և ինչ պէտք է այդ եպիսկոպոսը, եթէ մի քանի ամիս յետոյ չը հաւանեցին ու հանեցին պաշտօնից. պէտք է այդպիսով եպիսկոպոսների թիւն անվերջ բազմանայ: Այս տեսակ հարցերում ահա կարող էր ժողովը որոշ նախաձեռնութիւն վերցնել իր վրա. կարող էր ի մօտոյ ծանօթանալ եղած հայ հոգևորականների նկարագրի հետ և ցուցակներ կազմել առաջնորդական, փոխանորդական և այլ պաշտօնների յարմարաւոր թեկնածուների համար. կարող էր եպիսկոպոսութեան յարմար անձանց մի ցանկ պատրաստել, կարող էր գուցէ մինչև իսկ իրաւասութիւն վերցնել իր վրա, թեմերի և վիճակների կողմից, քանի որ այս առաջին անգամը միաժամանակ ընտրութիւններ պէտք է լինեն բոլոր թեմերի վիճակների համար—կատարել այդ ընտրութիւնները և խնայողաբար բաժանել եղած հայ հոգևորականներին այնպէս, որ համեմատական արժանաւորութեամբ իւրաքանչիւրին մի համապատասխան տեղ տրվի:

(Կը շարունակվի)

Կ. Վ.

ԲԻՒՐՕԿՐԱՏԻԱՅԻ ՄԻ ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹԻՒՆԸ

«Մինիստրների խորհուրդը նախագծել է Սիբիրի երկաթուղու երկրորդ գիծը շինել մօտ ժամանակներում»: Այս լուրը լոյս տեսաւ մի քանի շաբաթ առաջ մայրաքաղաքի լրագրներում, բայց և ոչ ոք լրջութեամբ չը վերաբերվեց նրան, մտածելով թէ՝ դա, անշուշտ, այն սովորական բադիկներից է, որոնց սենսացիօն լուրերի սիրահար խմբագիրները մերթ ընդ մերթ բաց են թողնում իրանց թերթերում: Սակայն, այժմ բանից դուրս է գալիս, որ դա բոլորովին բադիկ չէ եղել, այլ մի շատ մեծ ու շօշափելի սագ, մի անհաւատալի իրողութիւն:

Նոյն մայրաքաղաքի լրագրները հիմա աւելի մանրամասն տեղեկութիւններ են հաղորդում այդ խնդրի մասին, այն է՝ որ մինիստրների խորհուրդը, Սիբիրի երկաթուղու երկրորդ գծի շինութեան հարցը քննութեան առնելով, որոշել է այդ հարցը պէտք եղած ինստանցիաներին ներկայացնել ու ընդունել տալ, որ այդ գծի շինութիւնը անհրաժեշտ է համարվում մինչև Բայկալ լիճը, իսկ այդ լճից այն կողմ՝ Տանխօյ կայարանից մինչև Մանջուրիա կայարանը: Բացի դրանից՝ ենթադրվում է այդ գործի նախնական ծախսերի համար 42,960,100 րուբլի ծախսել, և այդ գումարի մի մասը արդէն թոյլատրված է ծախսել: Յետագայում էլ պէտք է հետզհետէ Սիբիրի միւս շրջանների երկաթուղու երկրորդ գիծը շինվի:

Կարդում ենք այս բոլորը և ակամայից ժողովրդական այն առածը յիշում, որ ասում է. «Մուկը իր բոյնը հազիւ էր մտնում, պոչից ցախաւել էլ կապեցին»: Եւ յիրաւի, միթէ վերջին ծայր անմտութիւն չէ՞ այսպիսի ֆինանսական տագնապալից ժամանակներում, երբ պետութիւնը ստիպված է ամենասոսկալի վաշխառուական տոկոսներով և այն էլ ահագին դժուարութեամբ փող հայթել արտասահմանում, Սիբիրի երկաթուղու երկրորդ գծի շինութեան մասին մտածելը, մի գործ, որի վրա հարիւրաւոր միլլիոններ պիտի ծախսվի:

Խօսք անգամ չէ կարող լինել, ի հարկէ, որ երկաթուղին առհասարակ մի երկրի համար չափազանց օգտակար բան է, որ նրա շնորհիվ երկրի տնտեսութիւնն ու վաճառականութիւնը զարգանում են, երկիրը բարգաւաճում է և այլն և այլն: Բայց միևնոյն ժամանակ անկարելի է ուրանալ և այն, որ երկրի բարգաւաճման ու ժողովրդի բարեկեցութեան համար, երկաթուղուց բացի, կան և շատ ուրիշ բաներ, շատ այլ պայմաններ, որոնցից Ռուսաստանը դեռ կատարելապէս զուրկ է:

Բացի դրանից, երկաթուղու շինութիւնը մի արդիւնագործական ձեռնարկութիւն է շինողի համար, լինի դա մասնաւոր կապիտալիստների ընկերութիւնը, թէ ամբողջ պետութիւնը: Իսկ իբրև այդպիսին, երկաթուղի շինողները, նախ քան գործի ձեռնարկելը, մի լաւ չափում, կշռում և մտածում են, թէ արդեօք իրանց ծախսելիք կապիտալը ո՞րչափ տոկոս պիտի բերի, իրանց ձեռնարկութիւնը ո՞ր աստիճան շահաւէտ է գործադրվելիք կապիտալի տեսակէտից: Նոյնպէս յայտնի բան է, որ փոքր տոկոսաբեր ձեռնարկութիւնների հետևից վազում են առհասարակ այն կապիտալիստները, որոնք այլ ևս չը գիտեն, թէ ուր խծկեն իրանց չափազանց կուտակված կապիտալները, և, փոխանակ սրանց անշարժ ու անգործութեան մէջ թողնելու, իբրև մեռած կապիտալ, աւելի լաւ են համարում գոնէ փոքր տոկոսներով բաւականանալ:

Ճիշտ այդ փոքր տոկոսաբեր ձեռնարկութիւններից է և Սիբիրի երկաթուղին, եթէ ոչ իր ամբողջ երկարութեամբ, գոնէ Իրկուտսկից այն կողմ, մինչև Մանջուրիայի սահմանները: Եւ հէնց այդ տեսակէտից, Ռուսաստանի ֆինանսներին անծանօթ մէկը, լսելով այդ երկաթուղու և այն էլ երկրորդ գծի շինութեան նախագիծը, պիտի ենթադրէ, թէ մեր պետական գանձարանը այն աստիճան խեղդված է աւելորդ կուտակված կապիտալներով, որ կառավարութիւնը, այլ ևս ուրիշ աւելի արդիւնաւէտ գործածութիւն չը գտնելով և չուզենալով նրանց թողնել իբրև մեռած կապիտալ, որոշել է այդ ոչ այնքան և նոյն իսկ շատ կասկածելի արդիւնաբեր գործին ձեռնամուխ լինել:

Իսկապէս որ կասէինք՝ շատ ծիծաղելի է մեր մինիստրների այդ խելակորոյս նոր վարմունքը, եթէ նա իրապէս այնքան տխուր ու կործանաբեր հետևանքներ չը խոստանար դժբաղդ ժողովրդին:

Թշուառ ժողովուրդը սովից տանջվում է, նա աւելի քան մի տարուց ի վեր ալեկոծութեան մէջ է և հող, ազատութիւն, տասնեակ ռեֆօրմներ է պահանջում, ռեֆօրմներ, որոնց գործադրութեան համար հարիւրաւոր միլլիոններ կարիք պիտի զգայ պետութիւնը, իսկ կառավարութիւնը այդ բոլորի փոխարէն ուզում է իր ծակ գանձարանից մի քանի հարիւր միլլիոն էլ շաղ տալ Սիբիրի դաշտերում և, երբ միլլիոնները ծախսված կը լինեն, նա նոյն քաղցած ժողովրդին կասէ. «Եկ, ցնծա, քո ներկայացուցիչները ուզում էին, որ ես ահագին գումարներ ծախսեմ և հողատէր ազնուականների հողերը յետ գնեմ քեզ համար, բայց ես աւելի գերամեծար համարեցի այդ նոյն գումարներով երկաթուղու նոր գիծ շինել, որպէս զի դու աւելի արագութեամբ Սիբիր գաղթես, ուր թէև մի քիչ հեռու և անյարմար է, բայց դա նշանակութիւն չունի, ձրի կը ստանաս ուզածդ հողը. ցնծա, ուրեմն, և վճարիր մեր ծախսված միլլիոնները»:

Այդպէս է, անշուշտ, մտածում կառավարութիւնը, բայց կը համաձայնի՞ արդեօք ժողովուրդը այսուհետև վճարել կառավարութեան այն ծախսերն ու պարտքերը, որ նա կանի առանց իր ներկայացուցիչների համաձայնութեան ու որոշման. ահա թէ ինչ է հիմա ամենից հետաքրքրականը: Կառավարութիւնը դժբաղդ ժողովրդի մերկ շալակին շատ ու շատ կապոցներ է նստեցրել և այդ կապոցները չափազանց շատ են վիրաւորել նրա մարմինը, որպէս զի նա համաձայնի մի նոր և խոշոր կապոց էլ շալակել...

Ռ.

ՆԱՄԱԿ ԲԱԳՈՒԻՑ

Յուլիսի 18-ին

Ներկայումս մարդասպանութիւնը մարդագազանների համար մի սովորական խաղալիք է դարձել. այսպիսի դրութիւն, կեանքի անապահովութիւն, համարեա, ամեն տեղ էլ իր որոշ տեղը ունի բռնած. ո՞վ կը համարձակվի մէկին մի վիրաւորական խօսք ասել, կամ անգիտակցօրէն անպատուել. բոլշեկան անձնական վէճը—տէրորը պատրաստ է...

Մէկին ստիպված պարտ էք մնացել մի քանի գրօշ (պատահել է դէպք Բալախանում, որ 3 կոպէկի համար մարդ են սպանել). վա՜յ ձեզ, շուտ արէք, տուէք ձեր պարտքը, թէ չէ զէնքը կը խօսէ... Այսպիսի անտանելի դրութիւնը մարդկանց կատարեալ գերել, սարկացրել է...

Դուք երբեմն ականատես կը լինէք այնպիսի գործողութիւնների, որոնք շատ յաճախակի տեղի են ունենում Կովկասի բոլոր քաղաքներում. ձեր աչքի առաջ կողոպտում են մարդկանց օրը ցերեկով, և դուք պէտք է ամենայն համբերութեամբ լռութեան տաք, ձայն չը հանէք, չը տեսնել ձևացնէք և ինքներդ ձեզ արդարացնելու համար ասէք մտքներումդ՝ «ամեն բանի ազատութիւն է... ինչ կարող եմ անել»...

Այսպիսի դէպքեր և գործողութիւններ ամեն օր կատարվում են Բագուի փողոցներում, գլխաւորապէս ձիաքարշի վագոններում, թէև ձիաքարշի վարչութիւնը վաղօրօք յայտարարութիւններ է կպցրել գնացքների ճակատին—«Զգուշացէք գրպանահատներից»...: Ով կարդալ գիտէ, զգուշանում է, բայց ահա քարշակի մէջ նստած են մեծ փափախներով, գիւղական արխալուղներով միամիտ մարդիկ. թուրք հայ, այդ միևնոյն է, ուստաները իրանց «հարիֆներին» *) ճանաչում են. չորս հինգ հոգի սալյած շապիկներ հագին պարոններ նստում են նրանց կողքին. այո, չորս հոգի, երբեմն էլ աւելի. նրանք լաւ ուսումնասիրած են իրանց անելիքը: Գործողութիւնը սկսվում է քարշակում նստած տասնեակ մարդկանց աչքի առաջ. ո՞վ կը համարձակվի նրանց խանգարել. ամենքի համար կեանքը քաղցր է. թող թալանեն միամիտ գիւղացու վերջին կոպէկը. ո՞ւմ բանն է կարվել գլուխը խաթայի մէջ գցել... Ինչ ուզում են թող անեն, այդ, ներկայումս, շատ չնչին դէպքերը ամեն օր անհրաժեշտօրէն տեղի են ունենում առանց մի որ և է արգելքի հանդիպելու. չէ՞ որ այդ տեսակ և այդպիսի գործողութիւնների համար կատարեալ ազատութիւն է. սպանիր, թալանիր, կեղծիր, ինչ ուզում ես արա. ազատ ես և ապահով, միայն լաւ բաների մասին մտածելը գլխիդ հանիր...:

Ի հարկէ, այդքանը որոշ շրջանի և որոշ մարդկանց համար. կան մարդիկ, որոնք իրանց կեանքն անգամ զոհ են բերում լաւ բաներ անելու և մտածելու համար. այդ անհերքելի ճշմարտութիւնը և հէնց այսօրվայ կենդանի փաստը գալիս են ապացուցանելու, որ իսկապէս կան մարդիկ այնպիսի զգացմունքներով և համոզմունքներով, որոնք ճշմարտութիւնը և արդարութիւնը պաշտպանելու համար զոհ են բերում իրանց կեանքն անգամ:

Վերևում ասացինք, որ մեր քաղաքում օր ցերեկով, գլխաւորապէս ձիաքարշներում, մարդկանց կողոպտում են շատ հանդիսաւոր կերպով, առանց դանակի և ատրճանակի սպառնալիքների, որովհետև նրանց կողոպտելու ժամանակ ոչ ոք չէ համարձակվում խանգարել, թէև տեսնում են... Ահա հէնց այսօր էր, որ այդ տեսակ մի դէպքի զոհ գնաց մի մարդկային կեանք ևս հէնց այն ժամանակ, երբ գրպանահատները ձեռքները մեկնած ուզում էին գրպանից փող հանել. ձիաքարշի կօնդուկտորը նկատում է և չէ կարողանում իրան զսպել, վրա է հասնում և բռնում քաղաքավարի հագնված գողին և յանձնում մօտիկ կանգնած ոստիկաններին, որոնք պէտք է տանէին և բանտարկէին... Բայց... այդ տեսակ չնչին բաների համար ճանապարհի կէսից բաց են թողնում գրպանահատներին... Սրանք վերադառնում են և կատաղութեամբ լցված ձիաքարշի գիծը բռնում ու սպասում «մատնիչ» կօնդուկտորին. հէնց որ ցանկալի նօմերը երևում է, նրանք իսկոյն թռչում են (յայտնի չէ թէ քանի հոգի) գնացքի մէջը, մի քանիսը բռնում են կառապանին, իսկ մնացողները դանակի մի քանի հարուածներով գետին են գլորում երիտասարդ կօնդուկտորին և անյայտանում: Այդ դէպքից յետոյ ձիաքարշի ծառայողները գործադուլ արին և պահանջեցին վարչութիւնից զէնք. թէ ինչ է պատասխանել վարչութիւնը, դեռ ևս մեզ անյայտ է:

Յ. Ղազանչեան

ՏԱՃԵՂՆԵՐ

III

—Թախ'սը (Տէր), երևի շատ ծանր է քեզ համար այդքան գրելը. ես կէս ժամ կարդալուց յոգնում եմ, ո՞ւր մնաց գրելուց. ախր չէ՞ որ մտածել էլ հարկաւոր է երբ շարադրում ես, ասաց այսօր իմ կիրգիզ-կազակ ծառայ Սաղանդիկը, երբ ես վեր դրի գրիչս, թէյի բաժակը վերցնելու. մենք՝ «տէր և ծառայ»

---

*) Որս—խաղալի պատառ:

տարվայ հաշիւը երևի փոքր ինչ անհանգստութիւն պատճառեց յօդուածագրին, որովհետև ծախքը եղել է եկեղեցու դրամագլխից. բայց այդ ծախքերը եղել են ժողովի համաձայնութեամբ և այնպիսի դէպքում, որ միայն ձայնի գոհունակութիւն պատճառէր անկեղծ քննադատին:

Ծախսեր եղել են՝ 500 ռ. Նախիջևանի արկածեալների օգտին և 450 ռ. Ներսիսեան դպրոցին նպաստ: Ի հարկէ, եթէ այդ ծախսերը չը լինէին, մուտքն աւել կը լինէր. բայց կան այնպիսի րօպէներ, երբ եկեղեցին պէտք է օգնութիւն գայ և, եթէ կարիքը սաստիկ, պէտք է նոյն իսկ իր սրբազան անօթներն ու զարդերը վաճառէ արկածեալներին օգնելու համար. այլապէս նա կատարած չի լինի իր վեհ կոչումը:

Յօդուածագիրը դժգոհ է, որ մեր եկեղեցին չունի հաշուապահ. նախ՝ հաշուապահը հրաւիրված է ծխական ժողովի գիտութեամբ և երկրորդ, որ իմ կարծիքով, եթէ եկեղեցու միջոցները ներում են, հաշուապահ անպատճառ պէտք է լինի, որովհետև երէցփոխների խճճված հաշիւները մի ժամանակ առած էր դարձել ժողովրդի մէջ:

Յօդուածագիրը մատնացոյց է անում և այն հանգամանքի վրա, որ մեր եկեղեցին չունի կանոնաւոր ցուցակ. այդ ճիշտ չէ. ցուցակը կայ, և եթէ յօդուածագիրը, փոխանակ ինսինուացիաներով զբաղվելու, գար եկեղեցի և ծանօթանար գործերի հետ, գուցէ աւելի բարեխիղճ լինէր:

Գալով այն հարցին, որ ես միայն անունով եմ երէցփոխ, պէտք է նկատեմ, որ ծխականներն աւելի ձեռնհաս են քննադատելու իմ գործունէութիւնը, և նրանք են, որ անցեալ տարի միաձայն վերընտրեցին ինձ նոյն պաշտօնի մէջ: Մեծ ուրախութեամբ կը զիջանէի յօդուածագրին պաշտօնս, եթէ միայն ծխական ժողովը հաւատար նրան գէթ մի քանի օրով եկեղեցու գոյքը: Եթէ յօդուածագիրը յիրաւի այդպէս մօտ է ընդունում իր սրտին եկեղեցու և դպրոցի շահերը, անհամեմատ աւելի օգտակար գործ կատարած կը լինէր օգնելով երէցփոխին և ծխական դպրոցի հոգաբարձութեանը գործերը առաջ տանելու համար և ի զուր տեղը ժամանակ չէր խլի ինձանից պատասխանելու իրան ինսինուացիաներով լի յօդուածին պատասխանելու: Sapienti sat:

Երէցփոխ՝ Յովսէփ Ամիրխանեան

—

Թիֆլիս, յուլիսի 18-ին

Պատուական «Մշակ» լրագրում զետեղված էր մի լուր, իբր թէ Էջմիածնի ս. սինօդը լսելով Եղիշէ վարդապետ Մուրադեանի զեկուցումը Թիֆլիսի կոնսիստորիայի ծառայողներիս զեղծումների մասին կարգադրել է արձակել դիւանապետ Բ. Այվազեանցին պաշտօնից, իսկ միւսներին յանդիմանել: Աչքի առաջ ունենալով որ այդ լուրը դիտաւորեալ նպատակով նախ տպվեց տէրտէրական «Հովիւ» շաբաթաթերթում, ես այսու յայտնում եմ, որ դա սուտ զրպարտութիւն է և տակաւին սինօդը ոչ մի հրաման չէ արձակել այդ առթիւ. դատարանական կարգով բաւարարութիւն պիտի պահանջեմ «Հովիւ»-ի խմբագիր Եղնիկ աւ. քահ. Երզնկեանից ինձ դիտաւորեալ նպատակով զրպարտելու համար:

Միւս թերթերից խնդրում եմ արտատպել այս երկտողը:

Բ. Այվազեանց

—

Թիֆլիս, յուլիսի 19-ին

Պ. խմբագիր.

Օրիցս մօտ երկու շաբաթ առաջ մի բաց նամակով խնդրեցի դադարած «Արշալոյսի» խմբագրութիւնից, որ, ըստ իր յայտարարութեան, կարգադրութիւն անէ «Ընկեր» շաբաթաթերթը ինձ ուղարկելու, սակայն մինչև օրս ոչ մէկ № չը ստացայ: Արդեօք ինչ է պատճառը. միթէ քաղաքային փոստով գրած նամակը երկու շաբաթվայ ընթացքում դեռ տեղ չի հասել: «Արշալոյսի» բաժանորդ

—

Թիֆլիս, յուլիսի 12-ին

Թշուառութեան ծովում խեղդվողի մի յուսահատ աղաղակի ձայն էր հնչվում «Մշակ»-ի № 135-ում. տառապող կնոջ գթութեան ձայնն էր սգաւոր մեղեդի հիւսում. Թոքախտով հիւծվող, անկողնում ախ ու վախ շնչող, տան միակ արհեստաւոր մշակի անբախտութեան անյոյս նշոյլներն էին հանգչում այդ նամակում: Հիւանդի տառապող ամուսինը բարեմիտ մարդկանց կարեկցութիւնն էր հայցում դէպի իր ցաւատանջ թաղն ու պսակը, կեանքի կարմիր օրերից, խինդ ու ծիծաղից զրկված մանրիկ զաւակները:

Կարդալով այդ տողերը, քաղցր պարտականութիւն համարեցինք ծանօթ ընկերների շրջանում հանգանակութիւն անել և ստորև նշանակված ցուցակով հաւաքված գումարը յիսուներեք (53) ռուբլի ներկայացնել յարգելի խմբագրիդ, յանձնելու թշուառ հիւանդի կնոջը—Սօֆիա Բէժանեանցին:

Ա. Թևեան, Ս. Եարղուլեան և Գ. Ալադջեան 3-ական ռուբլի: Յակոբջանեաններից՝ 2 ր. 20 կ.: Յ. Մելիք-Ջհանեան, Ջ. Ջ.-եան, Ն. Անհաբոնեան, Մ. Լալայեան, Յ. Սաֆարեան, К.-ра Тиф. Т-во, Ս. Ճաչիկեան, օր. Միրզոյեան, Մ. Ղալթաղեան, Ա. Գէորգեան, Օ. Մանջեան, Ա. Ալիխանեան, Վ. Սափարեան, Ա. Բաղինեան, Վ. Նաւիբեան, Խ. Ալիխանեան, Ա. Յակոբեան, Գ. Ղազարեան, Պ. Տէր-Մարտիրոսեան 1-ական ռուբլի: Բ. Մելիք-Ալլահվերդեան, Ա. Նաւասարդեան, Կօստեա, Յ. Սափարեան, Մ. Ամիրզադեան, Ա. Քանանեան, Գ. Ասլամազեան, Махровъ, Ս. Գալլատեան, Կուզանեան. Ս. Սափարեան, Ն. Կոստանդինեան, Գրիգուրով, Ե. Սափարեան, Բաղդի Մ. Բախչինեան, Սարգիս, Գ. Գիգինեան, Ա. Շահբազեան, Ա. Կոստանդինեան, Գ. Մկրտումեան, Լիզա Հայրապետեան, Բ. Շաքարեան, Մ. Ղարագեօզեան, Մ. Վաղամեան, Ա. Գալստեան, Գ. Պօղոսեան, Յ. Նաւասարդեան, Պ. Յակոբեան 50-ական կոպ.: Պ. Մխիթարեան, Մ. Մսեան 40-ական կ.: Հ. Մելքումեան, Ա. Պետրոսեան, Գ. Սահակեան, Ե. Խաչատեան, Գոգլա, Բեկիեան, Կ. Բարայեան 30-ական կ.: Բ. Առաքելեան, Ա. Յովսէփեան և Ժորժ՝ 25-ական կ.: Ե. Մանուէլեան, Մամիկոն, Փիլիպպոս, Մկրտչեան, Ս. Ս-ից, Կ. Վարդազարեան, Սարգիս, Հայկ, Կօլեա, Մարթա, Աբրահամ, К Эджубовъ, 20-ական կ.: Ժորժիկ, Վասօ և Խաթաբալա 15-ական կոպ.: Մի քանի հոգուց 1 ր. 80 կոպ.: Գումարն է 53 ռուբ.

Երանի թէ մեր լուման կարողանար գէթ մի փոքր չափով թեթևացնել թշուառ ընտանիքին և խեղճ ու կրակ աշխատաւոր հիւանդին.

Մ. Ղալթաղեանց, Ս. Տէր-Յարութիւնեանց, Մ. Լալայեանց, Ս. Ճաչիկեանց և Պ. Տէր-Մարտիրոսեանց:

Խմբագր. կողմից.—Բացի այս գումարից նոյն տիկ. Բէժանեանի ընտանիքի օգտին ստացել ենք Ախալքալաքից Մատթէոս Խալափեանի միջոցով ծանօթների շրջանում հաւաքված 16 ռուբլի: Միխայլօվկայից՝ Մ. Ղազարեանից 4 ռուբ., Գ. Գաբրիէլեանից 1 ռուբ., Ս. Մելիք-Մուրադեանից 1 ռուբ.: Ընդհանուր գումարն է 75 ռուբլի:

—

Թիֆլիս, յունիսի 27-ին

Թոյլ տուէք պատուական լրագրիդ էջերից մէկում հրատարակել այս մի քանի տողը, ես յայտնել էի ամիսներ առաջ տեղական թերթերում. «Նկատի ունենալով այն մեծ կարիքը, որ զգացվում է Եւրոպայի աշխարհագրութեան դասագրքի բացակայութեան առիթով այդ առարկայի գիտակցօրէն և զարգացուցիչ աւանդման կարևորութիւնը, ես ձեռնարկեցի թարգմանել «F. Schrader et L. Galouédec»-ից ֆրանսերէն յայտնի դասագիրքը, որի մէջ դիւրըմբռնելի և սքանչելի ուսումնասիրված է Եւրոպայի ֆիզիքական, քաղաքական և տնտեսական աշխարհագրութիւնը, կլիմայի ազդեցութիւնը, ծովերի, լեռների, ջրերի խաղացած դերը լուսաւորութեան ծաւալման գործում»: Այժմ պատիւ ունեմ յայտնելու, որ ես ձեռնարկել եմ թարգմանել յիշեալ հեղինակների երկրորդ հատորը, որի մէջ ամփոփված է Ասիան, Աւստրալիան և Աֆրիկան: Եւ որովհետև Ասիայի հատորի մէջ ուսումնասիրված է և մեր դժբաղդ հայրենիքը, ուստի և ինձ համար ցանկալի կը լինի ունենալ հայերի բնակված նահանգների և քաղաքների մասին վիճակագրական ճիշտ տեղեկութիւններ, որոնք յիշեալ դասագրքից ստանալ չեմ կարող: Այդ տեղեկութիւնները ցանկալի կը լինի պարունակեն իրանց մէջ՝ Ա) որքա՞ն բնակիչ ունի այսինչ կամ այնինչ նահանգը, քաղաքը, որքա՞ն է հայերի թիւը և օտարինը. Բ) բնակիչների պարապմունքները՝ երկագործութեամբ, խաշնարածութեամբ, արհեստներով, վաճառականութեամբ. Գ) արտադրութիւն կազմող գլխաւոր հարստութիւնները և ինչ գումարի կարող է հասնել տարվայ ընթացքում. Դ) ունե՞ն կրթական հաստատութիւններ և ինչ աստիճանի բարեկարգ վիճակի մէջ են. աշակերտների, աշակերտուհիների, ուսուցիչների թիւը և ծախսված գումարի քանակութիւնը:

Այսպիսի տեղեկութիւններ եւրոպական մասնագէտ պրօֆեսօրները ստանում են շատ աղբիւրներից, ինչպէս և իրանց ընդհանուր-հիւպատոսներից, որոնցից շատերը, բացի դիպլօմատիկական գործերով զբաղվելուց, պարապում են և նոյն երկիրների ուսումնասիրութեամբ, ուր պաշտօն են վարում: Մեզանում այդպիսի մի պարտաճանաչութիւն սպասել մեր կղերականներից աւելորդ կը լինի, քանի որ Ներսիսեան դպրոցի հոգաբարձական ընտրութեանց առիթով Վանքի մայր եկեղեցու քահանաները չէին կարողացել կազմել իրանց ծխականների լրիւ ցուցակը. ուստի և մեր սպասելիքը կը լինի մեր ուսուցիչներից, վարժուհիներից, լրագրական թղթակիցներից և այլ ինտելիգենտ վարչական անձնաւորութիւններից: Ես արդէն Ասիայի մի մասը թարգմանել եմ, և եկող ուսումնարանական տարվայ ընթացքում բոլորովին պատրաստ կը լինի և Ասիայի հատորը:

Յ. Այվազեան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի թեմի առաջնորդը երեկ մեկնել է Սանահնի վանքը և մի քանի օր մնալու է այնտեղ:

—

Եգիպտոսից Թիֆլիս է եկել ծանօթ հայ գրող և գործիչ դոկտոր Կ. Փաշայեան-խան, որ ուղևորվում է դարձեալ Պարսկաստան, Բանդէր-Գեաւ քաղաքը՝ բժշկութեան պաշտօնով: Նրա վերջին աշխատութիւնը («Դպրոցական Առողջապահութիւն») արդէն լոյս է տեսել ամբողջովին, և մենք յանձնարարում ենք բոլոր մեր դպրոցներին և մանկավարժներին ձեռք բերելու այդ գիրքը դպրոցական գրադարանների համար:

—

Բագուի ժամանակաւոր գեն.-նահանգապետը հրամայել է, որ բոլոր խանութները, բացի հացի, մսի և ուտելեղէնների խանութներից, պէտք է բացվեն առաւօտեան ժամը 9-ից և փակվեն երեկոյեան ժամը 7-ին:

—

Շուտով Թիֆլիսում լոյս կը տեսնեն հայերէն երկու պարբերական հրատարակութիւններ՝ «Հոսանք» երկշաբաթաթերթ Խ. Սամուէլեանի խմբագրութեամբ և «Շրջան» օրաթերթ Ատրպետի խմբագրութեամբ:

—

Ստացանք նոր գիրք՝ «Կանանց հարցը և նրա ծագելու պատճառները», Սօֆիա Դանիէլբեգեանի, արտատպած «Մուրճ» ամսագրից: Գինն է 20 կոպէկ:

—

Մօտ օրերս Թիֆլիսում լոյս կը տեսնէ վրացերէն լեզուով նոր օրաթերթ (սօց.-դեմօկրատական) «Նոր խօսք» անունով:

—

Յուլիսի լոյս 20-ի գիշերը անյայտ չարագործները կողոպտել են Կաֆեանի գալանտերէյնի մագազինը: Չարագործները տարել են մօտ 4000 ռուբլու ապրանք:

—

Թիֆլիսում կազմվում է բանկային ծառայողների պրօֆեսիօնալ միութիւն:

—

«Отголоски» լրագրին գրում են Պետերբուրգից, որ Պետական Խորհրդի անդամ Ա. Ա. Ֆրեզէն, որը երկար ժամանակ ապրում էր Կովկասում, նոր պաշտօն է ստանում:

—

Լուր տարածվեց, որ Թիֆլիսում, յուլիսի 22-ին, այրի Կայսրուհու անուանակոչութեան օրը թոյլ է տրված հայրենասէրներին թափօրներ կատարել. Թիֆլիսի քաղաքագլխի պաշտօնակատար Չերքեզովը այդ առիթով գնացել էր գեն.-նահանգապետի մօտ, որը պատասխանել էր քաղաքագլխին, որ նա ոչ ոքի չի թոյլատրի յուլիսի 22-ին թափօր կազմելու: («Отг.»):

—

Մօտ օրերս Թիֆլիսի նահանգական դատարանի դատախազը յանձնել է նոյն դատարանի առաջին քրէական բաժնին քննելու «Встань и Ходи» լրագրի նախկին խմբագիր Կ. Մ. Նազարենկօյի գործը: Նա մեղադրվում է, որ իր թերթի №1 համարում յունիսի 18-ին 1906 թ.ի 1) անպատվել է ռուսաց զօրքին, անուանելով նրան անփառունակ, կողոպուտներ անող և այլն, 2) վիրաւորել է կօզակ դասակարգին, կօզակներին անուանելով դաւաճաններ և ստորներ, մարդասպաններ և ռուսաց ժողովրդի ախտ: Գործը կը քննուի մօտիկ ապագայում:

—

Թիֆլիսի նահանգական դատարանի I քրէական բաժանմունքին յանձնարարված է քննել «Ходите въ Свѣтѣ» ռուսերէն շաբաթաթերթի նախկին խմբագիր հրատարակիչ Ա. Վ. Ելչանինօվի գործը: Նա մեղադրվում է, որ յիշեալ թերթի համարներից մէկում տպագրված է «Սեմէօնովցիները» վերնագրով մի գրուածք, որի մէջ ասվում է, թէ «Սեմէօնովցիներ» բառը հայհոյական խօսք է դարձել, միևնոյն է թէ խուլիգան, մարդասպան գազան, և երբ Պետերբուրգում, ուր գտնվում է Սեմէօնովսկի գունդը, որևէ մի զինուոր Սեմէօնովցիներից անցնողից ճանապարհ է խնդրում, նրանցից երես են դարձնում իբրև մի զզվելի բանից: Ապա գրուածաբար առաջ է բերում յիշեալ յօդ.-ի համառօտ բովանդակութիւնը, որը մի կատարեալ վիրաւորանք է Սեմէօնովսկի գնդի հասցէին. այդ պատճառով էլ Ա. Վ. Ելչանինօվը Թիֆլիսի նահանգական դատարանի կողմից պատասխանատուութեան է ենթարկվում:

—

Թիֆլիսի դռնապանները իրանց տէրերին առաջարկել են պահանջներ, որոնցից մենք առաջ ենք բերում գլխաւորները. 1) Ամսական ռոճիկ 25 ռուբլի, 2) բնակարան, 3) դռնապանների ռոճիկը ի հաշիւ տնատէրերի իր վրա պէտք է առնէ քաղաքային ինքնավարութիւնը, 4) դռնապանների և իրանց ընտանիքի բժշկութիւնը պէտք է կատարվի տանտիրոջ հաշուով 3 ամսվայ ընթացքում, 5) դռնապաններին ազատել որևէ ոստիկանական պարտականութիւններից, 6) իւրաքանչիւր մեծ տուն պահի մի դռնապան, և չորս փոքրիկ տներ՝ մի դռնապան: 7) Թոյլատրել զէնք կրել և այլն: Այդ պահանջներին բաւարարութիւն տալու համար ժամանակամիջոց նշանակվել է մինչև օգոստոսի 1-ը:

—

Թիֆլիսի գաւառից հաղորդում են, որ յուլիսի 18-ի գիշերը Նօրիօ գիւղում չորս հոգի զինված չարագործներ, ջարդելով տեղական բնակիչ Ջիճիկաշվիլու տան դարպասը, ներս են խուժում և մի քանի գնդակներ արձակելով պահանջում են յանձնել ունեցած փողերը: Տանտիրոջ որդին երկիւղից ցոյց է տալիս փողի և թանգագին իրեղէնների տեղը: Չարագործները, վերցնելով 400 ռուբլի կանխիկ փող և 156 ռուբլու արժողութեամբ իրեր, անյայտանում են:

—

Շօրապանի գաւառից մեզ հաղորդում են, որ յուլիսի 19-ի գիշերը երեք անյայտ զինված չարագործներ յարձակվում են երկաթուղու գծի վարպետի տնակի վրա, որ գտնվում է 131-դ վերստի վրա, թալանում են բանուոր Կօզլօվին և Ինասձէին, վերջինիս սաստիկ ծեծում են: Միևնոյն չարագործները 130-դ վերստի վրա ծեծել են հերթապահ պահապան Լօլաձէին և կողոպտել: 129-դ վերստի վրա կողոպտել են պահապան Բէժաձէին, ծեծել և գնդակով վիրաւորել ձեռքը, իսկ 128-դ վերստի վրա կողոպտել են պահապան Գօրձէին և անյայտացել: Վիրաւորին ուղարկել են երկաթուղու հիւանդանոցը:

—

«Отголоски» լրագրին հաղորդում են, որ Զուգդիդի նախկին գաւառապետ Գեղամօվը կենսաթօշակ է ստանում ամբողջ տարվայ և ռոճիկի չափով (2600 ռուբլի):

—

«Рус. Вѣд.»-ին հաղորդում են. «Յուլ. 14-ին, առաւօտեան, մի խմբագրի բնակարանում ձերբակալված են Պետական Դումայի անդամներ պ. պ. Ժօրդանիան և Միխայլիչենկօն: Ձերբակալված է նաև ինքը տանտէրը»:

—

Ներքին գործերի մինիստրութիւնը, «XX Вѣкъ» լրագրի ասելով, եկել է այն եզրակացութեան, որ Պետական Դումայի անդամներին պատասխանատուութեան ենթարկել Պետական Դումայի արձակումից առաջ գործած յանցանքների համար հարկաւոր չէ:

—

Պետական Դումայի նախկին անդամ Ալադինը Լօնդօնից վերադարձել է Պետերբուրգ: Նրա հետ միասին վերադարձել են միւս անդամներն էլ:

—

Յուլիսի 15-ին Պետերբուրգում յամառ լուր էր տարածվել, որ Ստօլիպինի կաբինետը մշակել է ամնիստիայի նախագիծը, որը յայտարարվելու է եկող շաբաթ: Ընդհանուր ձևով ամնիստիայի նախագիծը, ինչպէս ասում են, նոյնն է, այսինքն ամնիստիան չէ վերաբերում «ռումբ նետողներին», ռազմիկ խմբի անդամներին և այլն: «XX Вѣкъ»

—

Ինչպէս ասում են, Պետերբուրգի արտակարգ պահպանութիւնը ժողովրդի վրա արժենում է աւելի թանկ, քան Պետական Դուման պահելը: Զօրքի զինուորները ստանում են օրը 15 կոպ., ենթասպան՝ 1 ռուբ. 25 կոպ. սպան՝ 2 ր. 50 կ. և գեներալը՝ 5 ռուբլի:

—

Վերջին 5 օրերի ընթացքում 160 հոգուց աւելի աքսորվել են Եակուտի շրջանը և Տօբօլի նահանգը: Ներկայումս Տօբօլեան նահանգում գտնվում են 1000 քաղաքական յանցաւորներ: Նրանց վիճակը օրէցօր վատթարանում է: Օրական 5 կոպէկով, որ ստանում են նրանք, ապրել ի հարկէ անկարելի է: Նրանցից շատերը խնդրել են իրանց բանտարկել: Տօբօլեան նահանգի Նօվ գիւղի աքսորականները հաւաքվել են բանտի մօտ և պահանջել, որ իրանց կալանաւորեն: «Рѣчь»:

—

Մօտ օրերս գլխաւոր շտաբը, «Нов. Вр.»-ի ասելով, ստացել է գեներալ Ստեսսելից մի խնդիրք, որով վերջինս խնդրում է նշանակել նոր քննիչ մասնաժողով իր գործի համար: Ստեսսելը իր խնդիրքը պատճառաբանում է նրանով, որ գեներալ Ռօօպի մասնաժողովը քննութիւնը կատարել է ոչ անաչառութեամբ և հարցաքննել է միայն իր հակառակորդ վկաներին: Ստեսսելը խնդրում է իր գործի համար կանչել այն վկաներին, որոնց ինքը մատնացոյց կանէ:

—

«Народъ» լրագրի ասելով, կոմս Վիտտէին գրագրութիւն ունի շատ մարդկանց հետ: Նա այն հաստատ համոզմունքն ունի, որ Ռուսաստանը ներկայ մօմենտում անհրաժեշտ է զսպել վճռական և հաստատուն միջոցներով: Կառավարութիւնը մի առ ժամանակ ռեակցիոն ուղղութիւն պէտք է բռնէ և յետոյ միայն ընդարձակ բարենորոգութիւններ տայ: Այդ բոլորը կոմս Վիտտէն թելադրում է արտասահմանից:

—

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են. «Ամառ է, շոգ ամսումն ենք, սակայն համեմատաբար այս տարի մեզանում, շնորհիւ յաճախ տեղացող անձրևների, հով է անցնում: Սովորաբար քաղաքս են եկել բազմաթիւ օտարաբնակ ախալցխացիներ այս ամառս հանգիստ կեանք վարելու և ազգականների և ծանօթների հետ քիչ մխիթարվելու: Շրջակայ ամառանոցներից լսում ենք, որ թէ Աբասթումանում, թէ Բորժոմում և թէ Ուռավելում այս տարի «կուրսոմիկներ» թէև կան, սակայն անցեալ տարիների հետ համեմատած քիչ են թւով: Այդ առիթով լսում ենք տեղական տնատէրերից և առևտրականներից տրտունջներ: Հունձը մեզանում վաղուց սկսված է»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՐՍԿԱԿԱՆ ԹԵՐԹԵՐԻՑ

—

Թէհրան, յունիսի 13-ին

Հայութեան անհաշտ և ոխերիմ թշնամիներից երկուսը:

Կալկաթայում և Կահիրէում հրատարակվող «Հաբլուլմաթին» և «Չէհրէնիւմա» պարսկերէն շաբաթաթերթերը վաղուց ի վեր է, որ կատաղի կռիւ ու սոսկալի յարձակում են սկսել ընդհանուր հայութեան դէմ և չարամիտ ու գրգռիչ յօդուածներով հայ-թուրքական ընդհարումների ամբողջ պատասխանատուութիւնը բարդում են հայերի վրա: Դեռ այդքանը բաւական չը համարելով՝ ամբողջ մահմեդականութեանը սրբազան կռւի են հրաւիրում, որպէս զի իրանց անմեղ եղբայրների վրէժը լուծեն հայերից: Այդ զզուելի թերթերը քանիցս պարսից կառավարութեան և հոգևորականութեան լուրջ ուշադրութիւնը գրաւեցին մասնաւորապէս պարսկահայերի վրա՝ և խրատիւ պահանջեցին, որ «հայ պաշտօնեաները կառավարական շրջաններից և մաքսատներից հեռացվեն և մահմեդականները իրանց առևտրական յարաբերութիւնները խզեն խորամանկ, ստոր, խաբեբայ ու ապերախտ հայերի հետ, որոնք պարսից Շահերի և ազգից ստացած անսահման բարիքները սև ապերախտութեամբ են փոխարինում, խեղճ թշուառ մուսուլման եղբայրներին Կովկասում կոտորելով ու թալանելով»:

Ահա թէ ինչեր են ասում հայերի մասին այդ թերթերը. «Հայը որտեղ որ լինի նոյն ստոր, խաբեբայ, անհաւատարիմ և աւազակն է: Օսմանեան պետութեան անսահման բարիքներն ու շնորհները ինչով փոխարինեց այդ ցեղը, ստոր ու վատահոգի ազգը—չէ՞ որ ապստամբվելով, խաղաղ ժողովրդի վրա յարձակվելով ու նոյն իսկ խալիֆութեան պաշտպան ամենասիրելի Համիդի սրբազան անձնաւորութեան դէմ ապստամբութեան փորձ կատարելով: Արդեօք նոյն ապերախտութիւնը չը գործեցին հայերը դէպի ռուսաց գահը ու կառավարութիւնը՝ ուր նոյնպէս վայելում էին կատարեալ ազատութիւն և բարձր պատիւների ու պաշտօնների էին հասել: Եւ ինչն էր սովորում ապերախտ հայերին ռուսաց գլխաւոր պաշտօնեաներից շատերին հրապարակով և օրը ցերեկով սպանել. անշուշտ այս ապերախտութեան փաստերը հաստատում են հայերի բնածին ստոր ու վատահոգի յատկութիւնը, որոնք իրանց բարերարներից ստացած լաւութիւնը միմիայն չարիքով գիտեն փոխարինել: Արդ, երբ այդ անհանգիստ և ստորաքարշ տարրը, այսինքն հայը, երբ ընդունակ է օսմանեան և ռուսաց ամենահզօր պետութիւնները ազդել և նրանց սիւները խախտել և խաղաղ ժողովրդի հանգստութիւնը վրդովել, որքան առաւել նա կարող է պարսից կառավարութեան և խեղճ ժողովրդի գլխին պատուհաս ու չարիք դառնալ, և վայ այն օրին, երբ հերթը Պարսկաստանին հասնէ: Ի՞նչ ենք կարող անել մենք, խեղճ ու կրակ պարսիկներս, մեր մահակներով այդ իժերի և կարիճների դէմ, որոնք զէնքերով ու ռումբերով են զինված»:

«Հաբլուլմաթինի» վերջին 34-րդ համարում ընդհանուր մահմեդականութեան կողմից հետևեալ հարցն է ուղղված Նաջաֆի մեծ մուջթահիդներին, որը առաջ ենք բերում այստեղ թարգմանաբար.

«Կովկասի հայերի թշնամութիւնն ու սանձարձակութիւնը դէպի մուսուլմանները և այս երկու ազգութեան ընդհարումները հանրածանօթ են. անշուշտ դուք մեծ մուջթահիդներդ ևս լսած կը լինէք այդ մասին: Մահմեդականները իրանց պաշտպանելու համար պաղ զէնքի և հրացանի պէտք ունեն: Նրանց մեծ մասը անզէն է և զէնք գնելու էլ նիւթական կարողութիւն չունի և առանց զէնքի անկարող է իրանց պատիւը, կրօնը և ազգը պաշտպանել: Արդէն հազարաւոր անզէն մուսուլմաններ զոհվեցին և նրանց ստացուածքը կողոպտվեց: Այդպիսի հանգամանքում մուսուլման հարուստ դասակարգին թոյլատրելի՞ է բարենպատակ և սրբերին կտակված դրամներից, մանաւանդ մեծ մարգարէին յատկացված բաժնից զէնք գնել և ուղարկել Կովկասի մուսուլմաններին, որպէս զի նրանք իսլամութեան պատիւը պաշտպանելու համար գործ ածեն թէ ոչ: Արդեօք այդպիսի դէպքում ամեն մի մուսուլման հաւատացեալի պարտականութիւնն է թէ ոչ, որ ամեն մէկը իր կարողութեան չափով թէ դրամով, թէ կռուող ոյժով և թէ զէնքով օգնէ կովկասաբնակ մահմեդականներին: Եթէ օսմանեան և պարսիկ պետութիւնների մէջ գտնվող մուսուլմանները հնարաւորութիւն ունենան Կովկասի մուսուլմաններին զէնք հասցնել և այդ գործում նրանք զլանան ու թերի գտնվեն, արդեօք մեղք և յանցանք գործած չե՞ն լինի»:

Ահա թէ ինչ են պատասխանում Նաջաֆից հօթը մուջթահիդներ առանձին առանձին վերոյիշեալ հարցին և, որոնցից միայն մէկը թարգմանում ենք հետաքրքիր ընթերցողների համար:

«Իւրաքանչիւր մահմեդականի պարտականութիւնն է ամենայն կերպով օգնել կովկասաբնակ մահմեդականներին: Պէտք է զէնք հասցնել, ինչ միջոցով որ լինի, անհրաժեշտ է և հրամայողական մի պահանջ: Ով որ այդ գործում ձեռնպահ մնայ ու խնայէ, անհաւատ ու կրօնի թշնամի է, որովհետև Կովկասի այս օրվայ դէպքը նման է սրբազան կռւի (ջհադ): Եւ իրօք այնպիսի սրբազան մի պատերազմ է, որ նոյնիսկ իգական սեռն ևս պարտաւոր է ձայնակից լինել, հետևաբար ամեն մի հաւատացեալ պարտաւոր է ամեն կերպով օգնել Կովկասի մահմեդականներին, թէ կռուող ոյժ հասցնելով, թէ նիւթական օգնութեամբ, թէ զէնքով, թէ պաշարով և թէ նրանց պաշտպան լինելով: Շատ զարմանալի հարցմունք է, որը շատ պարզ մի խնդիր է և հարցնելու կարիք չը կայ, թէ մահմեդականների կրօնական պարտականութիւնն է և թէ առողջ բանականութիւնը մարդուս թելադրում է, որ երբ կրօնի թշնամիները յարձակվում են մեզ վրա, պէտք է ամեն մի հաւատացեալ դիմադրութեան և ինքնապաշտպանութեան գործին մասնակցէ, հետևաբար ընդհանուր մահմեդականութեանը թոյլ է տրվում, որ Իմամի (մարգարէի) բաժին դրամից, որը Աստուծու ճանապարհի համար է և առարկայ ամեն տեղ, թող գործածեն այդ ճանապարհում:

(Ստորագրութիւն) Գրեց՝ Հաջի Սէիդ Ալի Ռէզևի Թէբրիի էլ Նէջեֆի:

Սոյնանման 6 ուրիշ գրութիւններ ևս կան նոյն համարում, որոնք Նէջեֆի մեծ մուջտէյիդներից ստացված պատասխան են վերոյիշեալ հարցին: Բոլորի բովանդակութիւնը գրեթէ նոյնանման հրաւէր ու կոչ է, ուղղված ընդհանուր մահմեդականութեան, որպէս զի սրբազան պատերազմին մասնակցեն և Կովկասի մահմեդական եղբայրներին ամեն կերպով օգնութեան ձեռք կարկառեն:

Ահա թէ ինչ գոհարներ է շարում «Չէհրէնիւմա» թերթի 16-րդ համարը: Այդ թերթը երբ լսում է, որ վերջերս պարսից մաքսատնից մի հայ է հեռացվել պաշտօնից, այսպէս արտայայտում է իր ուրախութիւնը. «Երբ այդ ուրախալի լուրը լսեցի, փառք տուի Աստուծուն, Շահին ու մեծ վեզիրին երկար օրեր ու կեանք մաղթեցի և ինքս ինձ ասացի, որ արդէն հասել է հայերին պատժելու րոպէն: Ինչ չարիք որ դրանք հասցրին մեզ Կովկասում ու ամենևին չը խղճացին անգամ, այժմ պէտք է հարիւրապատիկ վրէժ առնել այդ հայերից: Մէկը չը կայ դրանցից հարցնող, թէ դուք որ պարսիկ ժողովրդին այդքան չարչարում ու հարստահարում էք, ինչ վատութիւն էք ստացել պարսիկ կառավարութիւնից, բացի այն որ տարիներից ի վեր շարունակ հանգիստ ու անդորր կերպով ապրել էք նրա պետութեան մէջ և ամեն տեսակ բարիքներ վայելել և ձեզանից շատերը պարսից կառավարական շրջաններում ինքնիշխան ու լիազօրներ են դարձել. վերջը մտածեցի, որ յանցանքը հէնց մեզանում է, որ «գայլի ձագեր ենք մեծացնում, որոնք վերջը մեզ պատառում ու կլանում են». Բայց, փառք Աստուծոյ, որ մեր ինքնակալ Վեհափառ Շահը այս չարամիտ ժողովրդի (հայի) նենգամտութիւնը հասկացել է ու սրանից յետոյ մեր կառավարական շրջանները այս ստոր ազգի ներկայացուցիչների ներկայութիւնից բոլորովին կը մաքրվեն:

Սոյն 16-րդ համարի մի այլ յօդուածից հետևեալն ենք քաղում հայերի հասցէին ուղղված. «Մեր թերթի լոյս տեսնելու առաջին օրից սկսած մինչև այժմ, ինչպէս և մեր ժամանակակից պարսիկ օրգանները անընդհատ գրեցին հայ տարրի վնասակար ու կործանիչ յատկութիւնների մասին՝ և կառավարութեանը և ժողովրդին հասկացրել և զգուշացրել ենք, որ վերջ ի վերջոյ հայերը իրանց ապականված վարք ու բարքով ու չարամտութեամբ կառավարական բարձր պաշտօնեաներին նենգութեան ու անհանգստութեան մէջ են ձգելու և այլն և այլն»:

Ահա թէ այդ հայակեր թերթերը ինչպիսի գոյներով են նկարագրում հայերին և ինչպիսի զրպարտութիւններ են սարքում մեզ դէմ՝ ու պարսիկ ժողովրդին գրգռում իր խաղաղ հայ հարևանների դէմ: Կասկած չը կայ, որ վաղ թէ ուշ համիդեանական այդ կորովի ու անխոնջ պրօպագանդիստները իրանց հայատեացութեան սոսկալի հնարքներով հասնելու են իրանց երազած նպատակին:

Եւ ինչպիսի անտարբերութեամբ կլանում են հայերը այդ ամբաստանութիւնները և հանգիստ կերպով սպասում են, որ մի ազատ երկրում լոյս տեսնէ մի պարսկերէն թերթ և պարսկական յիշեալ անարգ լրագիրների տարածած զրպարտիչ ու գրգռիչ լուրերը հերքէ և իրանց արդարացնէ: Սպասեցէք:

Մ. Մ.

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

—

(«Tribune»-ը և Պետական Դուման)

Լօնդօն, յուլիսի 23-ին

Այսօր բոլոր թերթերը իրենց առաջին սիւնակները և առաջնորդողները նուիրած են Պ. Դումայի բռնի ցրուելուն, և բոլոր գլխաւոր թերթերը շատ խիստ և կծու լեզուով մը յարձակած են ռուսական կառավարութեան վրա: Ներկայ կառավարութեան օրգան «Tribune»-ը որուն համարները միշտ պարունակած են ամենահամակրելի տողերը ռուս ժողովրդին համար և ամեն յարմար առիթով յուզելէ չէ դադրած հայկական հարցը, իր այս առաւօտուայ թիւին մէջ գեղեցիկ առաջնորդողով մը լաւ մը խայտառակելէ վերջ ռուս բիւրօկրատիան կը վերջացնէ հետևեալ ուշագրաւ պարբերութեամբ:

«Ինչպէս որ «Temps»-ը գրած էր, Ռուսաստանը փրկարարութեան համար այլևս յոյս չը պէտք է դնէ Ֆրանսիայի վրա. մենք անգլիացիներս ալ ամենայն վստահութեամբ կարող ենք ըսել, որ չը պիտի օգնենք կառավարութեան մը, որ անիշխանութիւն կը ստեղծէ յուսալով ազատութիւնը խեղդել: Բայց բիւրօկրատիան բարեկամներ պէտք է ունենայ Եւրոպայի մէջ, թէ որ կուզէ իր բանակները կերակրել և պարտքերը վճարել առաջիկայ 7 ամսուան միջոցին: Այնպէս կը կարծենք, որ նա վստահանում է Գերմանիայի և Աւստրիայի համակրութեան վրա, ինչ որ գոյութիւն չունի: Թէ որ կը կարծէ, որ «Սուրբ Դաշնակցութիւն» վերակենդանանայ, չը պէտք է մոռնայ նաև որ կենտրոնական Եւրոպայի մէջ կայ այժմ արի և զօրաւոր դեմօկրատիա մը ինչ որ չը կար վերջին դարի առաջին քառորդին մէջ: Եթէ դժբաղդաբար կը հասնի այն վայրկեանը, երբ արտաքին միջամտութիւնը անխուսափելի կը դառնայ, Ֆրանսիան և Անգլիան պէտք է ուսումնասիրեն, թէ ինչպէս կարող են ի գործ դնել իրանց փոխադարձ բարեկամութիւնը և իրանց ունեցած երկուստեք հաւատքը դէպի ազատութիւնը Ռուսաստանում խաղաղութիւնը հաստատելու այն ձևով, որ կարող է գոհացում պատճառել ռուս ժողովրդին: Միևնոյն ժամանակ մեր մէջ ալ կարծիքներու զանազանութիւն չը պիտի լինի: Առանց բացառութեան, բոլոր անգլիացիք պիտի հետևին ռուս ժողովրդին արիւն քրտինքին և փորձութիւններուն ամենախորին համակրանօք և եղբայրութեան ճշմարիտ իմաստով: Մենք հիացած ենք իրանց տաղանդին. իրանց տանջանքները և զոհողութիւնները իւրաքանչիւր ազնիւ անգլիացու սրտին դպած է: Կը յուսանք և կը սպասենք իրանց ազատութեան բոլոր շրջաններու մէջէն ապագայի համար մօտիկ բարեկամութիւն մը և խոստում մը, թէ ազատ Եւրոպան պիտի լինի նաև միացած և խաղաղ Եւրոպա»:

Տ. Գ.

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Նոր-Ջուղա, յունիսի 18-ին

Յունիսի 17-ին, տեղիս կենտրոնական դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ մի մանկական երեկոյթ. կային մանկական պարեր, երգեր, արտասանութիւններ և երաժշտութիւն. վերջում աշակերտները ներկայացրին տեղական կեանքից առնված մի փոքրիկ, որ ընդհանրապէս լաւ անցաւ, միայն թէ երգերի և պարերի մեծ մասը կրկնութիւններ էին նախորդ տարիներից: Դպրոցների տարեկան քննութիւնները արդէն վերջացել են արձակուրդը սկսվել է:

Մօտաւորապէս մի տարի էր, որ տեղիս ազգային արհեստագիտական դպրոցի կօշկակարական բաժանմունքը բացվել էր: Հոգաբարձութիւնը վարձել էր մի տաճկահայ հմուտ կօշկակար-վարպետ, որը խոստացել էր մի տարվայ ընթացքում վեց աշակերտ հասցնել, սակայն ինչպէս լսում ենք տարին դեռ չը լրացած կօշկակարը իր խոստումը դրժում է և ստոր միջոցների է դիմում հոգաբարձութեան գլխին խաղեր խաղալու, այնպէս որ հոգաբարձութիւնը ստիպված է լինում նրան հեռացնել պաշտօնից և արհեստանոցը ժամանակաւորապէս փակել: Լսում ենք հոգաբարձութիւնը արդէն դիմումներ է արել մի նոր վարպետ հրաւիրելու համար. յոյս ունենք, որ հոգաբարձութիւնը թոյլ չի տայ, որ այս լաւ ապագայ խոստացող հաստատութիւնը ընդմիշտ փակման դատապարտվի. միևնոյն ժամանակ խորհուրդ կը տայինք իրանց ապագայում զգուշանալ քաղցր խօսքերից և մեծ մեծ խոստումներից:

Հիմնվելիք ազգային որբանոցի հանգանակութեան գումարը, ինչպէս լսում ենք, հասել է մօտ 2000 թումանի: Որբանոցի շինութեան հիմքը արդէն դրվել է կուսանաց մենաստանում, և շինութիւնը արդէն բաւականաչափ բարձրացել է: Խոնարհաբար կոչ եմ անում մեր մօտաւոր և հեռաւոր ազգայիններին օգնել այս ամենակարևոր հաստատութեան յաջողութեամբ դէմ գնելու այն վտանգաւոր գործունէութեան, որ վերջերս սկսել են ցոյց տալ Ֆրանսիայից արտաքսված և այստեղ հաստատված եզուիտ վարդապետներն ու կոյսերը. որոնք արդէն ձեռնարկել են խոշոր հիմնարկութիւնների. մեր միամիտ ծնողները դժբախտաբար շուտով են խաբվում նրանց դատարկ խոստումներից և ամեն յոյսերից՝ սովորեցնել ֆրանսերէն լեզուն, ուսման պիտոյքներ և այլն ձրի հոգալ, ուղարկել Պարիզ բարձրագոյն ուսման համար և այլն: Կոյսերը արդէն կարողացել են՝ մեր օրիորդաց դպրոցում կրթութիւն ստացած մի օրիորդի (հայ-կաթոլիկ ընտանիքից) իրանց կուսանոցը տանելու, Պարիզ ուղարկելու խոստումով անշուշտ. ցաւալի է:

Հրաւիրում եմ հոգևոր իշխանութեան, հոգաբարձութեան և մեր միւս վարչական մարմինների լուրջ ուշադրութիւնը այս կարևոր գործի վրա և խնդրում, որ կրկնապատկված եռանդով գործեն դէմ գնելու համար հայ ազգի այս զարհուր թշնամիների վնասակար գործունէութեան:

Լսում ենք, որ այստեղի (Իսֆահանի) համար նոր անգլիական ընդհանուր հիւպատոս է նշանակվել և շուտով այստեղ է ժամանելու պ. Բարնհամ անունով մէկը, որը եղել է Հալէպում և Կիլիկիայի շատ մասերում և լաւ ծանօթ է հայերի և հայկական հարցի հետ:

Արձագանք

—

Թէհրան, յուլիսի 11-ին

Պարսիկ հոգևորականների պարագլուխներին և իրանց հետևորդներին Թէհրանից հեռացնելուց յետոյ քաղաքը առ երևոյթ հանդարտացաւ, խանութները սկսեցին բացվել և առևտուրը իր սովորական ընթացքը ստացաւ. բայց այդ հանդարտութիւնը շատ կարճ և առ ժամանակեայ էր:

Կառավարութեան վերջին կտրուկ և վճռական քայլերից յետոյ, ժողովրդի գանգատաւոր և դժգոհ մասը իր գանգատներն ու աղաղակները Շահին հասցնելու համար հետևեալ միջոցին դիմեց: Հոգևորականների Թէհրանից հեռանալու երրորդ օրը մի քանի վաճառական դիմում են անգլիական դեսպանատուն և երբ անգլիական կառավարութեան ներկայացուցիչների բարի տրամադրութիւնը իմանում են և խոստում են առնում, որ իրանց խնդիրներում Շահի մօտ կը միջամտեն, ապա ժողովուրդը վստահանալով, երկրորդ և երրորդ կարգի վաճառականներից շատերը հոգևորականների ու սէիդների հետ ապաստանում են դեսպանատանում, որոնց թիւը օրէցօր աճում է:

Մինչև անցեալ օր 700—800-ի չափ մարդիկ կային անգլ. դեսպանատանում, բայց այսօր ամբողջ բազարները փակել և մեծ բազմութիւն է հաւաքվել անգլիական դրօշակի տակ:

Երկու օր առաջ դեսպանատանում ապաստանած գանգատաւոր ժողովուրդը մի աղերսագիր է յանձնում շարժէ դաֆերին և խնդրում որ անձամբ Շահին ներկայացնէ և ոչ թէ մեծ վեզիրի միջոցով. Շահի անհանգստութեան պատճառով դեռ յարմարութիւն չէ եղել Ն. Վ. ներկայանալու:

Շահին ներկայացրած աղերսագրի մէջ ժողովուրդը պահանջում է կեանքի, գոյքի ապահովութիւն, արտաքսված հոգևորականների վերադարձ, «Արդարութեան տան» հաստատում, նահատակված անմեղ սէիդների արեան հատուցում... և մի քանի մինիստրների հրաժարվելը:

Թէ անգլիական կառավարութեան ներկայացուցիչները ինչ դիրք են բռնելու պարսիկ ժողովրդի դատը պաշտպանելու մէջ, այդ ցոյց կը տայ մօտիկ ապագան, բայց առ այժմ ոչ մի կարևոր բան չեն արել:

Մ. Մ.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

ԵԳԻՊՏՈՍ

Եւրոպական թերթերը հաղորդում են, որ համիսլամական շարժումը Եգիպտոսում հետզհետէ վտանգաւոր և սպառնալից կերպարանք է ստանում, որը մեծ մտատանջութիւն է պատճառում Անգլիային։ Հէնց դրան պէտք է վերագրել այն հանգամանքը, որ Անգլիան վերջերս սկսել է զօրքեր կենտրոնացնել Եգիպտոսում, որովհետև վախենում է երիտասարդ Եգիպտոսի ագիտատորներից, որոնք քարոզում են «Եգիպտոսը եգիպտացիների համար» գաղափարը։ Համիսլամական շարժումը Եգիպտոսում այնքան լուրջ է, որ նրա երիտասարդ խեդիվը, որը գտնվում է Եգիպտոսի անգլիական փոխ-կոնսուլի ազդեցութեան տակ, չէ կարողանում ճնշել։

ԹՈՒՐՔԻԱ

Կրետական հարցի լուծումը։ Կրետացիները չեն դադարում պահանջել իրանց միացումը՝ մայր հայրենիք Յունաստանի հետ, իսկ այն մեծ պետութիւնները, որոնք պահպանում են այդ կղզում ժանդարմերիաներ, ահագին ծախքեր անելով, որպէս թէ status quo-ն պաշտպանելու համար, դիմադրում են այդ արդարացի պահանջին։ Վերջերս այդ պետութիւններից՝ Իտալիան ուղղակի յայտնեց, որ մտադիր է շուտով յետ կանչել Կրետէից իր ժանդարմերիան, որովհետև Իտալիան ուղղակի շահագրգռված չէ, որ Կրետէն միայ սուլթանի անուանական իշխանութեան ներքոյ, և ահագին, անարդիւնաւէտ ծախքեր է անում։ Այժմ, ինչպէս երևում է, մեծ պետութիւնները եկել են մի եզրակացութեան, որ, իսկապէս, լուծումն է կրետական հարցի։ Ինչպէս հեռագրում է «Times» լրագրի թղթակիցը յուլիսի 6-ին, հովանաւոր-պետութիւնները (Աւստրիա, Իտալիա, Ռուսաստան, Անգլիա), համաձայնել են փոխարինել, գրեթէ ամբողջովին, միջազգային ժանդարմերիան տեղական ժանդարմերիայով, յոյն օֆիցերների հրամանատարութեամբ։ Լուր է պտտում նաև, որ այդ մեծ պետութիւններից երեքը համաձայն են նշանակելու յոյն-նահանգապետ արքայորդի Գէօրգիի փոխարէն, որ կամենում է հրաժարուել։

Իսկ «Temps» լրագրին հեռագրում են Հռոմից, որ հեռագիրների առատ փոխանակութիւնից յետոյ Լոնդոնի և Հռոմի մէջտեղ, կրետական հարցի գրեթէ բոլոր կէտերի վերաբերմամբ համաձայնութիւն է կայացել և յունական կառավարութեան շուտով յիշատակագիր կը յանձնվի արքայորդի Գէօրգիի հրաժարականը ընդունելու մասին. դրանից յետոյ յիշատակագիրը կը հաղորդվի կրետական ազգային ժողովին։

Երբ հովանաւոր-պետութիւնների միջազգային ժանդարմերիան կը հեռանայ, երբ զօրքը կը լինի յունական, նահանգապետը՝ յոյն—այդ մի և նոյն է թէ Կրետէն կը լինի յունական նահանգ։

Յեղափոխական շարժումը ալբանացիների մէջ եւ նրանց պահանջները։ Բիտօլիից հաղորդում են Սօֆիայի լրագիրներին, որ վերջին օրերը ապստամբական ալբանական չետաներ են երևացել, որոնք ներկայացրին Թիւրքաց կառավարութեան հետևեալ պահանջները, սպառնալով Թիւրքաց կայսրութեան ամբողջութեան։

«Կան փաստեր,—ասում է թղթակիցը,—որոնք ապացուցանում են, թէ յեղափոխական շարժումը ալբանացիների մէջ հասարակ սպառնալիք չէ ամենքի համար անտանելի թիւրքական րէժիմին, այլ լուրջ և մտածված գործ, որին դրսից աջակցում են ուժեղ գործօններ, ձգտող նրա իրագործման։

Ալբանական պահանջները ձևակերպված են հետևեալ 4 կէտերի մէջ.

1) Կառավարչական բոլոր գործակալները ալբանցիներ պէտք է լինեն։

2) Ալբանական ազգութիւնը պաշտօնապէս պէտք է ճանաչվի.

3) Ալբանական լեզուն պարտադիր պէտք է լինի.

4) Ալբանցի-մահմեդականները պէտք է բացառապէս ծառայեն Ալբանիայի սահմաններում։

Ալբանիայի մի քանի կենտրոններում ժողովներ կը գումարվեն ալբանական պահանջները աւելի մանրամասն մշակելու համար։ Բիտօլիի տեղական յայտնի ալբանացիները, որոնք կառավարչական բարձր պաշտօններ են վարում, կասկածվում են ալբանական յեղափոխական շարժման մասնակցութեան մէջ։ Թիւրքաց կառավարութիւնը կասկածում է, որ աւստրիական հիւպատոսն էլ մաս ունի այդ շարժման մէջ։

Թիւրքական եւ յունական գազանութիւններ Մակեդոնիայում ։ Թէ թիւրքական զօրքերը և թէ յունական հրոսակախմբերը վերջերս սկսել են գազանութիւններ գործել Մակեդոնիայում։ Թիւրքերը շրջում են գիւղերը և փող պահանջում. որ գիւղը ընդդիմանում է, մատնում են հրդեհի և սրածութեան։ Յոյների գործած գազանութիւնները աւելի սոսկալի են։ Նորերս Խումա գիւղի մօտ, չետնիկները սպանել են 12 վուցօվլախ տղաներ, ռումինական դպրոցի աշակերտներ։ Տղաները 10—12 տարեկան էին։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

20 յուլիսի

ԿՈՒՐՍԿ, 19 յուլիսի։ Երէկ Սուդժանի ոստիկանութեամբ կալանաւորված Պետական Դումայի նախկին անդամ Սօլօմկօ նահանգապետի կարգադրութեամբ ազատված է։

ՕԴԵՍՍԱ, 19 յուլիսի։ Նաւահանգստում գործադուլ են արել նաւերից հացահատիկ արտահանող բանւորները։ Աշխատանքը կատարելապէս դադարել է։ Առաջադրած են տնտեսական պահանջներ։

ՌԻԳԱ, 19 յուլիսի։ Բացի տպարանների մեծ մասից գործադուլ են արել 11 ֆաբրիկաներ, ընդամէնը 3600 բանւոր։ Նաւահանգստի բանւորները ձեռնարկում են աշխատանքներին։

ԶԷՄԼԵԱՆՍԿ, 19 յուլիսի։ Ամբողջ գաւառում բռնկված գիւղացիական յուզմունքները հանդարտվեցին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յուլիսի։ Պետական բանկի հաշուետուութեան համաձայն մինչև յուլ. 16-ը գործառութեան մէջ գտնվում է 119,000,000 ր. թղթադրամ, որ ապահոված է 108,740,224 ր. ոսկէ դրամով, նոյն թւում արտասահմանում 315,457,226 ր.։ Թագաւոր կայսրը յուլիսի 19-ին բարեհաճեց բաց թողնել Սիմբիրսկի նահանգապետի տրամադրութեան ներքոյ 20000 ր. յօգուտ Սիզրանի հրկիզեալների և Ալատիրի համար 5000 րուբլի։ Տէրիօկի համարեա ամբողջ ազգաբնակութիւնը Հերցենշտէյնի սպանութեան մէջ մեղադրում է երկու անձանց, որոնք պատկանում են, ըստ լուրերի, անարխիայի և յեղափոխութեան դէմ կռւող կուսակցութեանը։ Նրանցից մէկին Հերցենշտէյնի ընտանիքը հանդիպեց գետակի մօտ. նրանց տեսնելով նա արագ թաքնվեց և 5 րոպէից յետոյ լսվեց պայթիւն։ Սպանութեան ժամանակ մէջ կասկածված է կայարանի ժանդարմը, որ ըստ քննիչի ձերբակալված է։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ։ (?) Նկատողութիւն։ Թէև այս հեռագրի սկզբում չը կայ քաղաքի անունը, բայց, հիմնվելով տեղեկութիւնների վրա, նրանք Հելսինգֆօրսից են։

—Երեկոյեան 7 ժամին մօտեցող «Ցեսարևիչ» և «Բօգատիր» նաւերը 50 կաբէլս հեռաւորութիւնից սաստիկ կրակ բացին դէպի ֆօրտերը, որոնք գրաւված են խռովարարներով։ Սկզբում ֆօրտերը պատասխանեցին։ Կրակը ընդհատվեց ժամի 9-ին։ Նկատվում են առանձին նաւակներ, որոնք հեռանում են գնդակոծված տեղից։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 յուլիսի։ (Ուշացրել է հեռագիրը)։ Այսօր «Ալէքսանդրիա» ամարանոց են կանչվել Պետերհօֆ եկած ֆինլանդական զօրքը և առաջին գվարդիական բրիգադայի զօրամասը։ Չորրորդ ժամի սկզբին դուրս ելան Թագաւոր Կայսրը, Թագուհի կայսրուհին երեխաներով և Մեծ Իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչը։ Թագաւոր կայսրը ձեռք առնելով ֆինլանդական չէֆը Օգոստափառ Թագաժառանգին, կայսրուհու, Մեծ Իշխանուհիների և Մեծ Իշխանի հետ շրջեց ֆինլեանդականների բանակը և արտիլերիստների զօրամասը։ Թէյից յետոյ Նորին Կայսերական Մեծութիւնները նկարվեցին ֆինլանդական պօլկի և բատարէայի հետ։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 20 յուլիսի։ (Պաշտ. Թղթ.)։ Արտիլերիական կրակը դէպի ամրոցը վերսկսվեց։ Քաղաք են բերում վիրաւորներին։ Ամրոցի զօրամասը հաւատարիմ է պարտականութեանը, նա ուժեղացրած է հետևակով։ Քաղաքում յուզված է կարմիր գվարդիան։ Հաղորդակցութիւնը ամրոցի հետ վերականգնած է։ Խռովութիւնը սկսվեց ականային րօտայում յայտնած դժգոհութիւնից։ Շարժմանը միացաւ ամրոցի արտիլէրիայի մեծ մասը։ Զօրքը ուժեղացնելու համար քաղաք եկած երկու րօտայի երևալովը խռովարարները քաշվեցին մօտակայ ամուր կղզիները, որտեղից գիշերը կրակ բացին դէպի ամրոցը հրացաններից ու թնդանօթներից։ Ամրոցի զօրքը պատասխանում էր։ Երեկ ցերեկով հրաձգութիւնը ընդհատվեց, բայց հաղորդակցութիւնը կտրված է։ Առաւօտ և ցերեկ վերսկսվեց արտիլէրիական կրակը ընդմիջումներով։ Այստեղ են բերված կանայք և երեխաներ շոգենաւով։ Ընդհանուր դրութիւնը փոխված չէ, բայց պաշտպանողական կազմը թւով ուժեղացրած է։ Ամրոցի կորուստները քիչ են. խռովարարները աւելի կորուստ ունեն։ Գիշերը զինւորական հիւանդանոցում վախճանվեց չորս գնդակալվերից «Ֆինն» կրէյսէրի սպայ Դէլվիգը, որը հրաձգութեան ժամանակ խռովարարներից խլեց կարմիր դրօշակը Սկադուգէնի վրայից։

ՆՈՎՈՐՈՍԻՅՍԿ, 20 յուլիսի։ Անցեալ տարվայ բանւորների և զօրքերի ընդհարումների տարեդարձի առիթով ընդհանուր գործադուլ կազմելու փորձը չաջողվեց. բացի ցեմենտի և նաւթարդիւնաբերող գործարաններից, ոչ մի տեղ աշխատանքները չընդհատվեցին. խանութները բաց են, քաղաքում ամեն ինչ հանգիստ է։

ՕԴԵՍՍԱ, 20 յուլիսի։ Երեկոյեան «Южное Обозрѣніе» լրագրի տպարան մտան 15 զինված երիտասարդներ։ Կալանաւորելով բոլոր ներկայ եղողներին և կտրելով տէլէֆօնի հաղորդակցութիւնը, նրանք տպեցին մօտ 1000 թռուցիկ տպարանական գործի դիրէկտօրի սպանողի դատի առիթով։ Զինվածներից մէկը ձեռքում բռնել էր ռումբ. ոչ ոք չէ բռնված։ Տպագրութիւնը տևեց մօտ հինգ ժամ։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 19 յուլիսի։—Բանւորների և կարմիր գվարդիայի որոշումը յուլիսի 19-ին ընդհանուր գործադուլ անելու համար չը յաջողվեց և տեղի ունեցան միայն մասնակի դէպքեր, բայց և այնպէս քաղաքը դեռ չէ խաղաղվել։ Քաղաքի կեանքն արտաքուստ համարեա կանոնաւոր է ընթանում։ Ամբողջ օրվայ ընթացքում եկել է երեք զինւորական էշելօն։ Դատաստանական իշխանութիւնը պահանջել է բանտարկել 11 հոգի կողմնակի մարդիկ, որոնց, նաւահանգստի անկարգութիւնները ճնշելու ժամանակ, կալանաւորել էին զէնքը ձեռքներին և բերել հաւպվախտը։ Քրէական դատ է սկսվել հեռագրի և երկաթուղու գծերը փչացնող յանցաւորների, և շոգեշարժների ու վագոնների գրաւողների դէմ։ Այս գիշեր մի քանի տեղերում նորից են փչացրել։ Պետերբուրգից երեկ եկած պօստատար և արագաշարժ գնացքները բռնված են։ Զօրքերի աջակցութեամբ երկաթուղու գծի վնասված տեղերի մի մասը վերանորոգված է։ Գլխաւոր գծի վրա գնացքները երթևեկում են տեղափոխութեամբ Մալախոյնի մօտերքում։ Հեռագրաթելերը քաղաքում փչացնում էին այսօր էլ։

ԿՐՕՆՇՏԱԴ, 20 յուլիսի։ Յուլիսի 19-ին, երեկոյեան ժամի 12-ին, Կրօնշտադում անկարգութիւններ սկսվեցին։ Չորրորդ զօրանոցի նաւաստիները, հագնելով սև կուրտկաներ գլխարկների վրայից հանելով սպիտակ չեխոլները, վերցնելով հրացանները, դուրս վազեցին զօրանոցներից և սկսեցին կրակել օդի մէջ։ Ապա միանալով նրանց սպասող բանւորների և կողմնակի մարդկանց հետ, որոնց թւում կային և կանայք, նաւաստիները առաջ շարժվեցին դէպի նաւահանգստի հրամանատարի տունը։ Կանչված հետևակ զօրամասը գնդակներով ցրեց ամբոխը. միևնոյն ժամանակ յուզում. սկսվեց միւս զօրանոցի նաւաստիների մէջ։ Նաւաստիները սկսեցին հաւաքվել ու դուրս գալ զօրանոցներից, բայց նրանց աջողվեց համոզել, և նրանք իսկոյն վերադարձան զօրանոցները։ Մինչդեռ չորրորդ զօրանոցի նաւաստիները նորից հաւաքվեցին ու յարձակվեցին զինարանի վրա, ուզում էին կոտրել դարպասներն ու տները զէնքի պահեստներին տիրանալու համար, բայց հետևակ զօրքերի և գնդակացիրների օգնութեամբ նորից ցրեցին նրանց։ Դրանից յետոյ ամբոխը առաջ շարժվեց դէպի «Կօնստանտին» ամրոցը, ուր յոյս ունէր աջակցութիւն գտնել, որովհետև ամբոխի մօտենալուն պէս ամրոցի վրա կարմիր դրօշակ բարձրացրին և գրաւեցին ամրոցը։ «Կօնստանտին» ամրոցը ռմբակոծութեան ենթարկվեց և առաւօտեան ժամի 5-ին անձնատուր եղաւ։ Զինարանի մօտ ամբոխի հետ ընդհարվելու ժամանակ, ամբոխը բրաունինգ տեսակի ատրճանակներով կրակում էր զօրքի դէմ, որի ժամանակ սպանվել են առաջին կարգի կապիտան Ռօտինով, երկրորդ կարգի կապիտաններ՝ Դոբրօվօլսկի, Շումով և շտաբս-կապիտան՝ Ստոյանօվսկի։ Վիրաւորված են. սուրով մէջքից ու կրծքից կօնտր ծովակալ Բեքլեմիշէվ, գնդակով՝ երկրորդ կարգի կապիտաններ Կրենիցկի և Պաւոն, ձեռքից կպել է ու փշրել դաստակը, և միչման Մալցեվը։ Առաւօտեան կարգը բերդում վերականգնվել է։ Եկել է ֆինլանդական գունդը։ Ցանցաւորները կալանաւորվել են։ 22-րդ զօրաբանակի հրամանատար բարոն Զալցը հեռագրում է, որ խռովութիւնը Սվէյաբուրգում վերջացրած է։ Խռովարարները կալանաւորված են, որոնց մէջ մեծ թւով կողմնակի մարդիկ կան։

ՄԻՏԱՎԱ, 20 յուլիսի։ Պետական Դումայի նախկին անդամների կոչը լատիշական լեզուով տարածելու փորձը անմիջապէս ընդհատվեցին։

ՍԱՄԱՐԱ, 20 յուլիսի։ Վօլգայի ափում գտնվող փայտի և ածուխի պահեստները այրվում են։ Այրվում են նոյնպէս հացահատիկների շտեմարանները։

ԿՐԱՍՆՈՅԱՐՍԿ, 20 յուլիսի։ Գիշերվայ ժամի մէկին 15 հոգի զինված յեղափոխականներ մտել են «Սիբիր» ընկերութեան տպարանը և դուրս քաշելով 10 պուդանոց տպարանական մեքենան անյայտացել են։

ՍԵՒԱՍՏՕՊՕԼ, 20 յուլիսի։ Ծովակալ Սկրիդլօվը, Պետերբուրգի գործակալութեան թղթակցի հետ խօսակցելիս, նաւատորմղի յուզմունքը բացատրում է բացառապէս յեղափոխական պրոպագանդայով և սպաների տակտութեամբ։ Ի միջի այլոց ծովակալը երեկ այցելեց խռովութեան առիթով դատապարտված և դատի ենթարկված նաւաստիներին և չը հանդիպեց բռնկված տրամադրութեան, այլ ընդհակառակն վշտոտ։ Երբ ծովակալը նաւաստիներին «եղբայրներ» կոչեց, մի քանիսը պատասխանեցին. «մենք արդէն եղբայրներ չենք, այլ աքսորեալներ»։ Ծովակալը ասաց, որ դատավճիռը դեռ չէ հաստատված, նրա համար նաւաստիները եղբայրներ են։ Ընդհանրապէս խօսելով թղթակցի հետ, ծովակալը հեշտ հարց չէ համարում նաւատորմղի հանդարտեցումը։

ԿՕՍՏՐՕՄԱ, 20 յուլիսի։ Մակարևսկի գաւառում առաջացան անտառային հրդեհներ։ Այրվում են բացառապէս պետական անտառները։ Վնասները մեծ են։

ՏՕՄՍԿ, 20 յուլիսի։ Ձերբակալված է սօցիալ-դէմօկրատական կօմիտէտի նախագահը և նրա շատ անդամներ։ Բռնված են և դօկումէնտներ։

ՍԱՄԱՐԱ, 20 յուլիսի։ Հրդեհը կղզիացրած է։ Բացի այրված ամբարներից, քարածխի պահեստներից ու փայտից, վառվեցին Պրէօբրաժէնսկի եկեղեցու զանգատունը և Կորնեվի տունը. նոյնպէս և շատ ուրիշ շինութիւններ։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 20 յուլ.։ (Պաշտօնական)։ Բոլոր ապստամբած մասերը անձնատուր եղան զինւորական վարչութեան։ Բարձրագոյն կարգադրութեամբ նշանակված է զինւորական դատարան։

ՄՕԳԻԼԵՎ, 20 յուլիսի։ Սէնինսկի գաւառում Բօգօդարի կալուածքում 300 գիւղացիներ ուժով դադարեցրին բանւորներին։ Ծառայողները դիմադրութիւն ցոյց տուին խալաւնիկին։ Ստրաժնիկները ցրեցին ամբոխը և բռնեցին 4-ին։

ՊԵՐՄ, 20 յուլիսի։ Այսօր Պերմի ճանապարհին յափշտակութեան փորձ կատարվեց զինամթերի պահեստի վրայ։ Չարագործները բռնված են. վիրաւորված է 1 ստրաժնիկ և 1 չարագործ։ Ստրաժնիկը վախճանվեց։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ, 20 յուլիսի։ Եկած վաճառականական ֆիրմաների թւով տօնավաճառը գերազանցում է անցեալ տարվանը։ Առևտրական հարկեր եղան 174000 րուբլի։ Անցեալ տարի 157000 րուբլի էր։ Հետևեալ տարվայ տօնավաճառի բասկլադկան ծրագրվում է 7°/₀-ով պակաս։

ԿՐՕՆՇՏԱԴ, 20 յուլիսի։ Գիշերվայ ժամի 11-ի մօտ յուլիսի 19-ին անսպասելի կերպով ապստամբութիւն ծագեց բերդի ականգնդի մէջ։ Սպանելով գնդի հրամանատար Ալէքսանդրովին և նրա օգնական կապիտան Վրօչինսկուն, նրա մօրը և Ալէքսանդրովի քրոջը, խռովարարները զինված դիմեցին դէպի Կ. լիտ. բատալիոնը, որտեղ կալանաւորեցին բերդի սապէօրների պօդպօլկովնիկ Գրիգորևին և նրա հետ եղած սպաներին, որոնց բոլորին էլ սրահում բանտարկեցին։ Սապէօրների ստորին զինւորները նոյնպէս միացան ապստամբներին։ Գրաւելով երկաթուղու գնացքները, սապէօրները և իրանց հետ եղած ազատ ագիտատորներն ու կանայք դիմեցին դէպի «Կօնստանտին» ֆօրտը. Այստեղ հերթապահ արտիլէրիստները մերժեցին նրանց հետ միանալ։ Այն ժամանակ սպաները ձերբակալվեցին և կապվեցին։ Մի քանի արտէլէրիստներ կարողացան թնդանօթների փականները բանալ, բացի մէկից։ Տիրելով ամրութեանը, ապստամբները բարձրացրին կարմիր դրօշակ և թնդանօթից մի անգամ արձակեցին։ Շուտով ծովապաշտպանողների վրայից դէպի նրանք թափվեցին պուլէմէտների և գվարդիական արտիլէրիայի գնդակները։ Թնդանօթից հինգ անգամ արձակվեց։ Այն ժամանակ ապստամբները սկզբում պատասխանում էին հրացանների զալպերով, իսկ յետոյ խառնվեցին, սկսեցին թաքնվել կազարմաներում և ջուրը թափվել։ Մի մասը հեռացաւ ամրոցից «Մինէր» շոգենաւով, որի յետևից ուղարկվել են հալածողներ։ Առաւօտ ժամի 5-ին ապստամբները անձնատուր եղան։ Նրանց համար հիմնված է զինւորական դաշտային դատարան գեներալ-մայոր Ռակենտի նախագահութեամբ։ Ձերբակալվածների մէջ կան 15 կողմնակիններ։ Յուլիսի 19-ին մօտ կէս գիշերին զինված ապստամբութիւն սկսվեց ծովային գնդերում և նաւատորմիղում, որի ժամանակ սպանված են 1-ին րանգի կապիտան Րօդիօնովը, երկրորդ րանգի կապիտան Շումօվ, Դոբրօվօլսկի և րօտնի կօմանդիր՝ շտաբս-կապիտան Ստոեանօվսկի։ Ծանր վիրաւորված են փոխ-ծովապետ Բէկլէմիշէվը, լէյտէնանտներ Պաւոսօն, Դէլկլօն և Կրենիցկի և միչման Մալցեւ։ Նաւերից նաւաստիները դիմեցին դէպի արսենալ, կոտրեցին բայց փամփուշտ չը գտան, իսկ հրացանները վերլուծված էին մասերի։ Ենիսէյեան և ֆինլանդեան գնդերից ճնշվելով ապստամբները մասամբ փախան, մնացածները ձերբակալված են։ Բնակիչների կայքը չէ վնասված։

ՎԱՐՇԱՎԱ, 30 յուլիսի։ Սպանվեց գեներալ-նահանգապետի օգնական ոստիկանական մասի գեներալ Մարգրավսկի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յուլիսի։ Կովկասի ուսումնական շրջանի հոգաբարձու Զաւադսկուն հրամայված է ներկայ լինել Սենատում։

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 20 յուլիսի։ (Պաշտ. Թղթակց.)։ Ընդհանուր գործադուլ առաջացնելու անյաջող փորձից յետոյ կարմիր գվարդիան դիմեց բռնութիւնների։ Քաղաքում կռիւ սկսվեց կարմիր գվարդիայի, ոստիկանութեան և կօմմունալ պահակի միջև։ Դուրս են գալիս զօրքեր։

ԲԵՐԼԻՆ, 20 յուլիսի։ «Նօրդ-Դէյտշէ»-ի տեղեկութիւնների համաձայն, Վիլհելմ կայսրը օգոստոսի կէսին մեկնում է Վիլհելմսհօֆ ամրոցը, Համբուրգի մօտ, ուր և կը ժամանէ անգլիական թագաւորը։

ԼՕՆԴՕՆ, 20 յուլիսի։ Էդուարդ թագաւորը առանձին ուշադրութիւն է նուիրում ռուսաց դեսպան կոմս Բէկկէնդօրֆին։ Երեկ թագաւորը դեսպանի հետ եկաւ գուդվուդական ձիարշաւը։ Նախաճաշի ժամանակ կոմսուհի Բէկկէնդօրֆը նստած էր թագաւորի կողքին։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 յուլիսի։ Զինւորական գլխաւոր դատարանը քննեց Զաբայկալեան շրջանի նախկին զինւորական նահանգապետ գեներալ Խօլշչեվնիկովի վճռաբեկ գանգատը, որը արդարացել էր զինւորական ժամանակաւոր դատարանում Չիտա քաղաքում, որ մեղադրվում էր քաղաքական յանցանքներում և մեղաւոր էր ճանաչված միայն պաշտօնական զանցառութիւնների մէջ, որի համար դատապարտված էր ամրոցում բանտարկութեան մի տարով և չորս ամսով, հեռացվելով ծառայութիւնից, առանց զրկվելու աստիճաններից։ Դատարանը անհետևանք թողեց գանգատը։ —Այսօր Կրօնշտադ մեկնեց գլխաւոր ծովային-զինւորական պրօկուրօրը։ Ներքին գործերի մինիստրութեան ընդհանուր գործերի դեպարտամենտում մշակվում են հրէական հարցին վերաբերեալ նիւթերը, և մշակվել է ապրիլի 17-ի ուկազի համաձայն, և մինիստրների խորհրդին է յանձնված աղանդաւորների վերաբերեալ օրինագիծը։ Թէօդօսիայի գեներալ-նահանգապետի հարցմունքին, թէ թոյլատրելի է կուսակցական կլուբների կազմակերպութիւնը, ներքին գործերի մինիստրութիւնը պատասխանեց, որ հիմք չը կայ արգելելու այդպիսի կլուբների, համայնքների և միութիւնների կազմակերպութիւնները, որոնց գործունէութիւնը չէ խանգարում գոյութիւն ունեցող օրէնքներին։

Ներքին գործերի մինիստրութիւնը հաստատել է օրագրութիւն, որով թոյլատրվել է Վօրօնէժի անբերրիութեան պատճառով սերմեր առնելու համար կրեդիտ բանալ, բացի նախկին վճռած 500,000-ից, կրկին 400,000, Օրլօվսկի համար բացի 200,000-ից կրկին 180,000, Սամարային բացի 450,000-ից կրկին 550,000 Սիմբիրսկին բացի 500,000-ից կրկին 340,000, Վլադիմիրսկի նահանգին—80,000, Սարատօվսկին 1,000,000։ Բացի այդ Սամարայի համար վճռված է հացահատիկ և մթերք առնելու համար 500,000։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակների և Թեմիս բարձր սրբազան առաջնորդի առաջադրութեան համաձայն սուրբ Սարգիս եկեղեցու 21 և աւելի տարեկան հասակ առած երկու սեռի ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցի ամսիս 23-ին, կիրակի առաւօտեան ժամը 10-ին, մէկ պատուիրակ ընտրելու ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու։

Սուրբ Սարգիս եկեղեցու՝ Կոստանդին քահանայ Արարատեանց

(Ն. ու. գ.) 3—3

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակների և Թեմիս բարձր սրբազան առաջնորդի առաջադրութեան համաձայն Հաւլաբարի Շամքօրեցոց ս. Աստուածածնի եկեղեցու 21 և աւելի տարեկան հասակ առած երկու սեռի ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցի ամսիս 23-ին կիրակի ժամի 12-ին երեք պատուիրակ ընտրելու ռուսահայոց առաջին եկեղեցական-կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու։

Նոյնպէս նոյն օրը տեղի կունենայ զրացվելու ա) հոգաբարձութեան զեկուցումը ծխական դպրոցի մասին, բ) ծխական դպրոցի նիւթական ապահովութեան խնդիրը։

Համազասպ աւագ քահ. Տէր-Յովհաննիսեան

Երեցփոխ՝ Ա. Ղոնդախսազեանց

(Ն. ու. գ.) 3—3

ՀՐԱՒԷՐ

Հոգևոր բարձր-իշխանութեան հրամանով, Էջմիածնի ս. Գէորգ եկեղեցու 21 տարեկանից բարձր տարիք ունեցող կին և մարդ ծխականները, կիրակի ամսիս 23-ին, առաւօտեան 10 ժամին հրաւիրվում են նոյն եկեղեցին երկրորդ և վերջին ժողովի՝ ընտրելու երեք պատուիրակ, որոնք պէտք է ընտրեն ռուսահայոց առաջին ազգային-եկեղեցական ժողովի համար Թիֆլիս քաղաքի կողմից չորս պատգամաւոր։

Ներսէս աւագ քահ. Աբովեան

(ա. գ.) 2—2

ՀՐԱՒԷՐ

Ջրկինեան եկեղեցու մի պատուիրակի վերջնական ընտրութիւնը, ս. Էջմիածնի կենտրոնական ժողովի առիթով, անշուշտ կայանալու է յուլիսի 23-ին, ժամի 12-ին։ Ուստի խնդրում եմ յիշեալ եկեղեցու իրաւատէր բոլոր երկսեռ ծխականներին շտապել՝ իրանց քաղաքական պարտականութիւնը կատարելու։ Առանձին հրաւիրատոմսեր չեն լինելու։

Գրիգորիս քահ. Երզնկեան

Ս. Գ. Շերմազանեան

Ընդունում է հիւանդներին ամեն օր 9 ժ.—2 ժ. և երեկոյեան 4—7 ժամը։ Երևանեան հրապարակ, տ. Գուրգենովի № 7. պօդեզդ նոտար Միհրօվի։ (Ե.Ե.Գ.) 30—100

ՀՐԱՒԷՐ

Բաթումի, Քութայիսի, Սուխումի և Արդուինի շրջանների պ. պ. պատուիրակները հրաւիրվում են Բաթում, կիրակի օրը, ամսիս (յուլիս) 30-ին, ծխական դպրոցի դահլիճում կազմելու ժողով և ընտրելու Բաթումի ընտրողական շրջանից ՄԻ ՊԱՏԳԱՄԱՒՈՐ առաջիկայ օգոստոսի 15-ին կայանալիք կենտրոնական ժողովին մասնակցելու համար։

Մեսրոպ աւագ քահ. Մելեան

(Հ. Ե.) 1—2

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսի կոնդակների և Թեմիս բարձր սրբազան առաջնորդների առաջադրութեանց համաձայն ամսիս 23-ին, կիրակի ժամը 11-ին, Նաւթլուղի ս. Գէորգ եկեղեցում լինելու է ընտրութիւն մի պատուիրակի, որ մասնակցելու է կենտրոնական ժողովի չորս պատգամաւորների, ուստի սրանով հրաւիրում եմ 21 և աւելի տարիք ունեցող երկու սեռի ծխականներին, որ շտապեն նոյն օրը և ժամին ներկայ գտնվել յիշեալ իրանց ծխական եկեղեցում ընտրութեանը մասնակցելու։

Միխայէլ Ալէք. աւագ քահ. Վարդանեանց

1—1

ՀՐԱՒԷՐ

Թիֆլիսի Տափի-Թաղի ս. Գէորգ եկեղեցու 21 տարեկան հասակն առած երկու սեռի ծխականները 2-րդ անգամ հրաւիրվում են՝ շնորհ բերել ամսիս 23-ին ս. Նշանի դպրոցը, որպէսզի երկու պատուիրակ ընտրեն ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի համար՝ չորս պատգամաւորների ընտրութեանը Թիֆլիսում մասնակցելու նպատակով։ Ժողովի սկիզբը կը լինի ժամը 11-ին։

Յովհաննէս աւագ քահ. Մարտիրոսեանց

1—2

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակների և Թեմիս ս. առաջնորդի առաջադրութեան համաձայն Թիֆլիսի Բեթղեհէմի ս. Աստուածածին եկեղեցու 21 և աւելի տարեկան արական և իգական բոլոր ծխականները պէտք է ընտրեն մի պատուիրակ ռուսահայոց եկեղեցական կենտրոնական առաջին ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեան մասնակցելու. ուստի յարգանօք երկրորդ և վերջին անգամ խնդրում ենք ամսիս 23-ին, կիրակի օրը, առաւօտեան ժամը 10-ին, շնորհ բերել Բեթղեհէմի եկեղեցին, ընտրութեանը մասնակցելու։

Գէորգ քահ. Մեհրաբեանց

Երեցփոխ՝ Վասիլ Աւանեանց

1—1

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակների և Թեմիս բարձր սրբազան առաջնորդի առաջադրութեան համաձայն ս. Նշան եկեղեցու 21 և աւելի տարեկան երկու սեռի ծխականները երկրորդ և վերջին անգամ հրաւիրվում են նոյն եկեղեցի ամսիս 23-ին, կիրակի օրը, ժամը 12-ին, մէկ պատուիրակ ընտրելու ռուսահայոց առաջին կենտրոնական ժողովի համար՝ 4 պատգամաւորների ընտրութեան մասնակցելու։

[illegible] ս. Նշան եկեղեցու՝

Գրիգոր քահ. Շերմազանեան

(ու. գ.) 2—2

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ

(ԻՐԱՒԱԲԱՆ)

մի երիտասարդ ցանկանում է ստանձնել աւագ ուսուցչի պաշտօն հայոց ծխական դպրոցներում։ Ցանկալի Սև ծովի ափերին։ Պայմանների համար դիմել հետևեալ հասցէով.

Въ гор. Ахалкалаки. Оганесу Пичикянцу.

1—5

ՀՐԱՒԷՐ

Ամենայն հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակների և Թեմիս բարձր սրբազան առաջնորդի առաջադրութեան համաձայն՝ Հաւլաբարի հայոց սուրբ Կարապետ եկեղեցու 21 և աւել տարեկան հասակն առած երկու սեռի ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցի ամսիս 23-ին, կիրակի, ժամը 10-ին, երեք պատուիրակներ ընտրելու ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու։

Սուրբ Կարապետ եկեղեցու՝ Գաբրիէլ աւագ քահ. Տէր-Գաբրիէլեանց

(Ե. Ե. Գ.) 3—3

ՀՐԱՒԷՐ

Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակների համաձայն, Թեմիս առաջնորդի կարգադրութեամբ, Թիֆլիսի Կաթուղիկէ ս. Աստուածածին (Մայդանի ս. Գէորգ) եկեղեցու 21 տարին լրացրած՝ արական և իգական բոլոր ծխականները պիտի ընտրեն երեք պատուիրակ՝ ռուսահայ եկեղեցական-կենտրոնական ժողովի պատգամաւորական ընտրութեան համար. ուստի յարգելի ծխականները հրաւիրվում են շնորհ բերել յուլիսի 23-ին, կիրակի օրը, առաւօտեան $10\frac{1}{2}$ ժամին նոյն եկեղեցին երկրորդ անգամ ընտրութեանը մասնակցելու։

Ժողովը կանոնաւոր կը համարվի որքան ընտրողներ էլ ներկայ լինեն։

Միաբան Կաթուղիկէ եկեղեցու

Ստեփաննոս աւագ քահանայ Սամուէլեանց

(Ե. Գ. Կ.) 2—3

ՀՐԱՒԷՐ

Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի սրբատառ կոնդակների և Թեմիս բարձր առաջնորդի առաջադրութեան համաձայն՝ Թիֆլիսի Մուղնու ս. Գէորգ եկեղեցու 21 և աւել տարեկան հասակն առած երկու սեռի ծխականները հրաւիրվում են նոյն եկեղեցի ամսիս 23-ին, կիրակի ժամ 12-ին, երեք պատուիրակներ ընտրելու ռուսահայոց առաջին եկեղեցական կենտրոնական ժողովի համար չորս պատգամաւորների ընտրութեանը մասնակցելու։

Մուղնու եկեղեցու աւագ քահանայ

Տէր-Սիմէօն Ջաշկեանց

[illegible]

РАДИКАЛЬНОЕ СРЕДСТВО,
дѣлающее лицо свѣжимъ и чистымъ

Источникъ красоты. Патент. въ Англіи.

Кремъ КАЗИМИ
МЕТАМОРФОЗА
противъ ВЕСНУШЕКЪ

Доказательствомъ подлинности и дѣйствительности средства противъ веснушекъ служитъ подпись Cazimi и приложенный при каждой банкѣ рисунокъ „ИСТОЧНИКЪ КРАСОТЫ“. Безъ подписи Cazimi и рисунка, утвержденнаго Департаментомъ Торгов. и Мануфактур. за № 4683— ПОДДѢЛКА.
Продается во всѣхъ аптекарс. парфюм. магаз. и аптекахъ.

(ամ. 2 ան. 11 և 22) 4—6

[illegible] հայոց եկեղեցական ծխական դպրոցի հոգաբարձութիւնը սրանով յայտարարում է, որ դպրոցիս համար ուսուցիչներ արդէն վարձված են։ Այն ուսուցիչների դիմումներին, որոնց չէ պատասխանված, ազատ են։

1—3

ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹԻՒՆԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Երկու սեռի անձանց համար

(Баку, уголъ Красноводск. и Меркурьевск. д. Набатовыхъ)

Կուրսերի նպատակն է տալ ունկնդիրներին մասնագիտական եւ առեւտրական կրթութիւն եւ պատրաստել հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Կուրսերում աւանդվում են՝ 1) Առևտրական թուաբանութիւն և թուաբանութիւն համրիչի վրա. 2) Հաշուապահութիւն արդիւնաբերական, գործարանական, առևտրական և բանկային. 3) Առևտրական թղթակցութիւն. 4) Առևտրական տնտեսագիտութիւն. 5) Առևտրական և մուրհակային օրէնքներ. 6) Գեղագրութիւն և արագագրութիւն (ուղղումն ձեռագրի). 7) Ուսուցումն գրող մեքենայի վրա։

Ուսումն սկսվելու է սեպտեմբերի 20-ից։ Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից՝ ամենայնօր կուրսերում առաւօտեան ժամը 9-ից մինչև 12-ը և երեկոյեան 4-ից մինչև 7 ժամը։

Կուրսերի կանոնադրութիւնը (уставъ) և մանրամասն ծրագիրը (программа) ուղարկվում և ուղարկվում են ձրիաբար։ Օտարաքաղաքացիները դիմում են Баку, учредителю коммерческихъ курсовъ А. И. Те ъ-Каспарову.

(Ե. Գ.) 4—30

ГАЛА-ПЕТЕРЪ
МОЛОЧНЫЙ ШОКОЛАДЪ
ПЕРВЫЙ ВЪ МІРѢ.
Изобрѣтатель Д. ПЕТЕРЪ.
въ ВЕВЕЙ (Швейцарія).

Ծախվում է լաւագոյն կոլոնիալ մագազիններում

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

(Թիֆլիս, Լերմոնտովսկայա փողոց, № 15)

Ցանկացողները ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնադրին Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն և ունեն Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուի հաստատած ծրագրի համեմատ, օրինաւոր ատեստատներ։

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՍՎԵԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ

Կուրսեր ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձ ր ի ա բ ա ր կուրսերի հիմնադրի բնակարանում։ Օտարաքաղաքացիները դիմում են ТИФЛИСЪ, учредителю коммерческихъ курсовъ С. П. Мануэльянцу.

Հ. 1 անգ. 3—12

Տպարան «ՀԵՐՄԷՍ», ընկ.

Электропечатня типографскаго Т—ва «Гермесъ» Мадат. ул. № 5